



Հալեպի Մէջ ՀՀ Գլխավոր Հիւպատոսը Կը Պատմէ Հոն Տիրող Վիճակի Մասին

Հայաստանեան «ԹԵՐԹ» կայքէջին տրուած հարցազրոյցի մը ընթացքին, Հալեպի մէջ Հայաստանի գլխավոր հիւպատոս Տիրոս Գեորգեան պատմած է քաղաքին մէջ տիրող իրավիճակի, հիւպատոսութեան աշխատանքներուն ինչպէս նաեւ սուրիահայերուն առնչուող հարցերուն:



Հալեպի մէջ ՀՀ հիւպատոս Տիրոս Գեորգեան

«Զինուած հակամարտութիւնը Հալեպում եւ յարակից շրջաններում շարունակուած է: Այս ամսուայ ընթացքում արձանագրուեց իրավիճակի որոշակի սրում: Յաւաք սրտի, հայերով հոծ բնակեցութեամբ թաղամասերը՝ Նոր Գիւղը, Սուլէյմանիէն, Ազիզիէն եւ այլն, եւս գերծ չմնացին ուժգին ուժբակոծութիւններէ: Արդիւնքում եղան մարդկային զոհեր եւ վիրաւորներ նաեւ մեր հայրենակիցները շրջանում: Զգալի վնասներ կրեց յատկապէս Նոր Գիւղ թաղամասը: Վնասուել են անտեղ գտնուող ՍԲ. Գրիգոր Լուսաւորիչ եւ Զուարթնոց եկեղեցիները, հայկական դպրոցները, մանկապարտէզները, տպարանը, Սիրիահայ Օգնութեան ինչպէս կենտրոնը, ինչպէս նաեւ մեր հայրենակիցներին պատկանող բազմաթիւ տներ եւ խանութներ: Ռմբակոծութեան ենթարկուեց նաեւ Հին Հալեպում

գտնուող համայնքի հոգեւոր կենտրոն Քառասուն Մանկանց եկեղեցին», - պատմած է հիւպատոսը:

Խօսելով սուրիահայութեան վիճակի մասին հիւպատոսը ըսած է, - «Ռմբակոծութիւնների հետեւանքով վնասուել են բազմաթիւ տներ եւ խանութներ: Այս պահի դրութեամբ բազմաթիւ բնակավայրեր երբեմնի ծաղկուն եւ հայահոծ Նոր Գիւղ թաղամասում անբնակելի են դարձել, ինչի հետեւանքով մեր շատ հայրենակիցներ լքել են իրենց տները. ոմանք տեղափոխուել են Լաթաքիա, շատերը էջ 4

Ա.Ս.Ն.Ի Սօս Հայաստանի Հանրապետութեան Դեսպան Թաթուլ Մարգարեան Պատուում



Նախաձեռնութեամբ Գալիֆորնիահայ երախտաշատ համայնքին, Երկուշաբթի 16 Յունիս 2014-ին, Պէվըրլի Հիլզ-ի Մոնթաթ պանդոկի շքեղակառոյց գլխավոր հանդիսարահին մէջ, տեղի ունեցած մեծարանքի իւրաքանչեւ ճաշկերոյթ-հանդիսութիւն մը, որ նուիրուած էր Ա. Ս. Ն.-ի մօտ, Հայաստանի Հանրապետութեան վսեմաշուք Լիազոր Դեսպան՝ Թաթուլ Մարգարեանի դիւանագիտական բարձրորակ դիւանագիտական ին-

նամեայ ծառայութեան աւարտին աւիրթով: Մեծարող Դեսպան Մարգարեան կը վերադառնայ Հայաստան: Մեծարանքի հանդիսութեան մասնակից՝ Հայաստանի Հանրապետութեան Հիւպատոսութեան, Հայց. Առաքելական Եկեղեցոյ, Կաթողիկէ եւ Աւետարանչական մեր երեք համայնքապետերուն ու երեք քաղաքական կուսակցութիւններու շարքին՝ տասնութ միութեան կառոյցներուն վերոնշեալ նախաձեռնութիւնը կը զգենուր համագ- Մար. Էջ 18

Նախարար Նալբանեան Յայտարարեց Որ, Ռուսաստան Կը Փորձէ Նպաստել Հայ-Թրքական Յարաբերութիւններուն

Յունիս 23-ին, Երկօրեայ այցով Հայաստան գտնուող Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սէրգէյ Լաւրով հանդիպումներ ունեցաւ նախագահ Սերժ Սարգսեանի եւ արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանեանի հետ:



Հայաստանի եւ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարները մամլոյ ասուլիսի ընթացքին

Երկու նախարարներու մասնակցութեամբ տեղի ունեցած մամլոյ ասուլիսի ընթացքին Ռուսաստանեան պետական ԻՏԱՌ-ՏԱՍՍ լրատուական գործակալութեան թղթակիցը Նալբանեանին հարց ուղղեց, թէ նկատի առնելով վերջին շրջանին Ռուսաստանի եւ Թուրքիոյ միջեւ հաստատուած լաւ յարաբերութիւնները, կրնա՞յ արդեօք Ռուսաստանը նպաստել հայ-թրքական յարաբերութիւններու բարելաւման:

Նախարար Նալբանեան պատասխանեց. - «Սերգէյ Վիտորովիչը ներկայ էր 2009-ի Հոկտեմբերին կայացած հայ-թուրքական արձանագրութիւնների ստորագրման արարողութեանը եւ դա խորհրդանշում էր Ռուսաստանի աջակցութիւնը հայ-թուրքական յարաբերութիւնների նորմալացմանը: Ռուսաստանի եւ գործընթացը սատարող այլ երկրների դիրքորոշումը իր արտայայտութիւնն էր գտել բազմաթիւ յայտարարութիւններում, ուր ասուած էր, որ պէտք է առանց նախապայմանների վաւերացնել եւ կեանքի կոչել այն պայմանաւորուածութիւնները, որոնք ամրագրուած են 2009թ. Հոկտեմբերին Ձիւրիխում ստորագրուած արձանագրութիւններում: Այնպէս որ, իրօք, Ռուսաստանը կարող է եւ փորձուի անել, այն ինչ կարող է»:

Նախարար Նալբանեան պատասխանեց. - «Սերգէյ Վիտորովիչը ներկայ էր 2009-ի Հոկտեմբերին կայացած հայ-թուրքական արձանագրութիւնների ստորագրման արարողութեանը եւ դա խորհրդանշում էր Ռուսաստանի աջակցութիւնը հայ-թուրքական յարաբերութիւնների նորմալացմանը: Ռուսաստանի եւ գործընթացը սատարող այլ երկրների դիրքորոշումը իր արտայայտութիւնն էր գտել բազմաթիւ յայտարարութիւններում, ուր ասուած էր, որ պէտք է առանց նախապայմանների վաւերացնել եւ կեանքի կոչել այն պայմանաւորուածութիւնները, որոնք ամրագրուած են 2009թ. Հոկտեմբերին Ձիւրիխում ստորագրուած արձանագրութիւններում: Այնպէս որ, իրօք, Ռուսաստանը կարող է եւ փորձուի անել, այն ինչ կարող է»:

Ըստ Ազերի Պաշտպանութեան Նախարարին «Ատրպէյճանական Բանակի Կարգախօսը Երկրորդ Հայկական Պետութեան Ստեղծումը Բացառելն Է»

Պաշտպանութեան մէջ տեղի ունեցած ռազմական ուսումնական հաստատութիւններու շրջանապարտներուն աւարտական վկայականներ յանձնելու արարողութեան ընթացքին, Ատրպէյճանի պաշտպանութեան նախարար Զաքիր Հասանով յատարարած է որ, Ատրպէյճանական Բանակի կարգախօսը երկրորդ հայկական պետութեան ստեղծումը բացառելն է:

«Հակառակ այն իրողութեան, որ հրադադարի մասին համաձայնագրի կնքումէն անցծ է շուրջ 20 տարի, այդ ուժիմը ռազմաճակատի վրայ կը խախտուի է ամեն օր», - յայտարարած է ազերի նախարարը՝ լարուածութեան ամբողջ մեղքը բարդելով հայկական կողմին վրայ:

«Հայաստանի Զինուած Ուժերը կը գնդակոծեն մեր հենակէտերն ու բնակավայրերը, հայկական հետախուզական խումբերը կը փորձեն յարձակիլ մեր դիրքերուն վրայ, բայց անոնց այդ գործողութիւնները նախապէս կը կանխուին եւ թշնամին կորուստներ կը կրէ: Հայկական կողմը ի վերջոյ պէտք է համակերպուի իրականութեան եւ ուժերու առկայ հաւասարակշ-

րութեան հետ», - ըսած է Հասանով:

Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարը չէ անդադրած սակայն Նախիջեւանի մէջ տեղի ունեցած վերջին իրադարձութիւններուն:

Շաբաթ մը առաջ, Հայաստանի պաշտպանութեան նախարարութեանը մօտ կանգնած աղբիւրներ հաղորդեցին, որ հայկական ուժերը չաջողած են վերահսկողութիւն հաստատել հայ - նախիջեւանեան սահմանագիծի Զուլֆաչի հատուածին վրայ գտնուող շարք մը բարձունքներուն մօտ, որու արդիւնքով ինքնավար հանրապետութեան մայրաքաղաք Նախիջեւանը փաստացի յայտնուած է Հայաստանի Զինուած Ուժերու ստորաբաժանումներու ուղղակի տեսանելիութեան դաշտին՝ մօտ 30-35 քիլոմետր հեռավորութեան վրայ:

Հայկական կողմը հրապարակեց նաեւ բարձունքներու գրաւումը ապացուցող շարք մը լուսանկարներ, իսկ անցած շաբաթավերջին սահմանագիծի այդ հատուածը այցելեց Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ու՞ր կը հասցնի կրիմինալ աշխարհում Հզորների Պատերազմը

ԱՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ

Հայաստանում ապրելն արդէն վտանգաւոր է դառնում այնքան, որքան ամենակրիմինալ համբաւ ունեցող երկրում, այն յայտ է ներկայացրել վազանց անել անգամ Սիւրիյալին: Գրեթէ չկայ մի օր, որն անցնի առանց կրակոցների ու որքան շատանում են օրը ցերեկով գէնքի գործադրման դէպքերը հանրային վայրերում, թուով է՝ նոյնքան անգործութեան է մատնում իրաւապահ ու արդարադատութեան համակարգը: Մէկը միւսին յաջորդող դէպքերը գողականների, բարձրաստիճանների ու նրանց հարազատ բարեկամների մասնակցութեամբ ոչ միայն չեն բացայայտում, այլ «բացայայտում» են արեւմտահայկան հիմնաւորումներով՝ ամէն անգամ բոլորի աչքի առջեւ բռնաբարելով արդարութիւնը ու ջրից չոր հանելով բարձրաստիճաններին: Վերջին աղմուկ հանած միջադէպը էջմիածնում հնչած կրակոցներն են, որի վերաբերեալ նոյնպէս պէտք է բացայայտման յոյսեր ունենալ, լաւատեղեակները պնդում են, որ ամենավերջերս վախով են խօսում այս միջադէպի մասին եւ ուղիներ որոնում աւելի մեծ արիւնահեղութիւնից խուսափելու համար:

Յիշեցնենք, որ էջմիածնում օրեր առաջ գեներալներ Սեյրան Սարոյեանի եւ Մանուէլ Գրիգորեանի հարազատների մասնակցութեամբ վիճաբանութիւնն աւարտուել է կրակոցներով, հին հաշիւներն են գլուխ բարձրացրել Գեներալ Մանուէլի էջմիածնում եւ ոչ միայն յայտնի հեղինակութիւն Դոն Պիպոյի (Արթուր Ասատրեան) միջև: Դոն Պիպոյի եւ Մանուէլ Գրիգորեանի հակասութիւնները տարիների պատմութիւն ունեն եւ լեզուներ են շրջում նրանց արիւնահեղութիւնների մասին: Ասում են, որ ժամանակին Դոն Պիպոյն Հայաստանից արտագաղթել է հենց գեներալի ջանքերով ու հիմա վերադարձել է ու որոշել ոչնչացնել այդ կլանը: Դեռեւս առաջին միջադէպն է, որի արդիւնքում վիրաւորուել է Սարոյեանի եղբորորդին, բայց էջմիածնում վստահ են, որ այս խմորը շատ ջուր է վերցնելու: Եւ ուրեմն, ո՞վ է Դոն Պիպոյն, որի դէմ անգոր է ամենակարող իշխանութիւնը, ենթադրում էր, որ իշխանութիւնների սիրելի գեներալներին հարազատներին վիրաւորող տեղում պէտք է պատժուեր՝ անկախ նրանից՝ մեղաւոր է, թէ ոչ, բայց արդէն մի քանի օր է, քար լուծութիւն է այս գործով:

Մի բան յստակ է, որ Պիպոյն նրանցից է, որ այդպէս հեշտ սարքեն նրա ու իր հարազատների գլխին: Այսպիսով՝ Արթուր Ասատրեանը, նոյն ինքը՝ Պիպոյն, ծնուել (1971թ.) եւ մեծացել է էջմիածնում, որտեղ նա մեծ հեղինակութիւն է վայելում: Նա ապրում է Իտալիայում: Արթուրի՝ Հոմոմով գտնուող 4,8 հեկտարանոց վիլլան, որը ժամանակին եղել է Իտալիայի նախագահի ռեզիդենցիան, Հայաստանից եւ աշխարհի տարբեր երկրներից բազմաթիւ պատուիրակութիւններ է հիւրընկալել: Պիպոյն, առաջին անգամ Հայաստանից տեղափոխուել է 1994 թուականին, յետոյ կարճ ժամանակով վերադարձել, եւ կրկին մեկնել՝ վերջնականապէս հիմնուելով Իտալի-

իայում: Պիպոյի մասին բազմաթիւ լեզուներ են պտուտում՝ որպէս դրսում յաջողութիւնների հասած էջմիածինցի երիտասարդ, որպէս գործարար-բարերար ու հեղինակութիւն: Նրա հիմնական բիզնեսը կենտրոնացած է Ռուսաստանում եւ արտասահմանեան որոշ երկրներում: Նա զբաղւում է գրասենեակային շէնքերի շինարարութեամբ, որոնք յետագայում տրուում են վարձակալութեան, զբաղւում է նաեւ ոսկերչութեամբ եւ ռեստորանային բիզնեսով: Իտալական մաֆիան նրան Դոն է կնքել, ժամանակին նա էլ չի հերքել եւ հպարտացել այդ փաստով, որ լինելով հայ տղայ, կարողացել է այդ աստիճանին հասնել, անկեղծացել է նաեւ, որ ինքն ընկերութիւն է անում մաֆիայի հետ:

Պիպոյն դեռ տարիներ առաջ համարձակ յայտարարութիւններ է արել Գեներալի եւ իշխանութիւնների հասցէին ու գրեթէ ծիծաղելի համարել, որ ինքը Հայաստանը լքել է գեներալ Մանուէլ Գրիգորեանի հետ ընդհարուելու պատճառով: «Մի անգամ ուղղակի հեռախօսային խօսակցութեան ժամանակ ենք ընդհարուել, ես շատ կոպիտ եմ արտայայտուել, որովհետեւ ինքը սխալ էր: Նրա կողմնակիցները միշտ յարգանքով են վերաբերուել, իմացել են, որ իմ հանդէպ չի կարելի անյարգալից որեւէ բան անել: Իրենք երբեք իմ գործերի մէջ քիթները չեն մտցրել: Ոչ մի անգամ: Էդ անգամ իմացրել էին նրան, կողքից որոշ մարդիկ խառնակել էին: Նա այդ ժամանակ ՀՀ պաշտպանութեան փոխնախարար էր արդէն, 2000-2001 թուականներին էր:

Դրանից յետոյ ժողովուրդը սարքել է լեզուներ: Ինքը դրանից յետոյ փորձեց տարբեր մարդկանց միջոցով խօսել ինձ հետ, ես հրաժարուեցի, քանի որ մենք տարբեր մարդիկ ենք, մեր ճանապարհները ոչ մի ձև չեն հատուկ: Ինքն՝ իր համար, ես՝ իմ համար: Վերջերս Հայաստանում էի, որոշ մարդիկ շահագրգռուած էին որպէսզի մեր մէջ ընդհարում լինի, յատկապէս, որ հիմա այլեւս փոխնախարար չէ ու իշխանութիւնների հովանաւորութիւնը չի վայելում, բայց ես ինձ աւելի վեր եմ դասում: Ես երբեք ընկածին չեմ հարուածի: Ինձ դա չի սազի: Նաեւ ես երբեք չեմ կարող ինձ թոյլ տալ իրենց պէս, ասենք, 20-40 թիկնապահներով խեղճ մարդու վրայ հասնել, ծեծել: Ես չեմ կարող այդ մակարդակին իջնել: Ես եթէ խօսելու բան ունենամ՝ մենակ կը խօսեմ ու կը բացատրեմ, թէ ինչը ինչի համար եմ անում: Ոչ թէ խուլիզանութիւն կ'անեմ, ու գնամ քնելուց ինքս իմ մէջ մտածեմ՝ ես էս ինչ սրիկա եմ...» դեռ 2008-ին իր հարցազրույցներից մէկում ասել է Դոն Պիպոյն: Նա ասել է նաեւ, որ Հայաստան կը վերադառնայ եւ մշտական բնակութիւն կը հաստատի այն ժամանակ, երբ իշխանութիւնները առաջնորդուեն օրէնքով: Որովհետեւ ըստ նրա՝ Հայաստանում շատեւրը հենց ուժեղ, ինքնասիրութիւն, արժանապատուութիւն ունեցող մարդ են տեսնում, ուզում են ոտքի տակ սապոն դնեն, «որովհետեւ իրենց լաւ տղայ, կարծիք ունեցող մարդիկ պէտք չեն, պէտք են սրիկա մարդիկ, որ իրենց հրամանները կատարեն»:

«ՀԱՅԵԼԻ»

Հեռուն գնացող սադրանք

ՀԱԿՈՒՐԱՆԱԼԹԱՆ

Էլեկտրաէներգիայի թանկացման դէմ քաղաքացիների բողոքի ակցիան ընթացաւ Հայաստանի համար աւանդական դարձած սցենարով՝ բողոք, բախում ոստիկանութեան հետ, ծեծուողներ, բերման ենթարկուածներ: Յետոյ մի մասին կամ բոլորին բաց կը թողնեն, յետոյ կը լինի ոստիկանութեան յայտարարութիւնն իր անմեղութեան ու հրեշտակութեան մասին, ու կրկին խնդիրը կը թաղուի աղմուկի մէջ: Իսկ խնդիրը չափազանց կարեւոր է, քանի որ հերթական անգամ կառավարման անարդիւնակութիւնը, եթէ խօսքն անգամ չանցանքի մասին չէ, փորձ է արւում ծածկել քաղաքացիների գրպանը մտնելով:

Հայաստանում քաղաքացիական բողոքի ակցիաները կարծես թէ յայտնուել են մի ցիկլի մէջ, որից շտապ անհրաժեշտ է դուրս գալ: Երբ որեւէ խնդրի դէմ բողոքի ակցիա է լինում, հենց սկզբից պարզ է լինում, թէ ինչ լրահոս է յաջորդելու մի քանի բողոք անց: Ու յաջորդում է հենց դա:

Նոյնիսկ կայ սադրանքի տպաւորութիւն: Թէ ով է սադրողը, դժուար է ասել, որովհետեւ կարող են լինել «քաղաքացիականներ», կարող է լինել նաեւ ուղղակի համազգեստաւոր ոստիկանը: Բայց, որ բողոքի քաղաքացիական ակցիաների այդօրինակ ընթացքը խիստ ձեռնառու է գրեթէ բոլորին, քաղաքացիական սեկտորից բացի, աներկբայ է:

Ձեռնառու է թէ իշխանութեանը՝ որն այդպիսով բուն խնդիրը, բուն թեման վերածում է ընդամէնը աղմուկ-աղաղակի, լղղղելով խնդրի ու ընդհանրապէս քաղաքացիական պայքարի էութիւնը, ձեռնառու է թէ այն քաղաքական ուժերին, ովքեր քաղաքացիական պայքարի, քաղաքացիական գործընթացի մէջ տեսնում են իրենց «քաղաքական» գործընթացի լուրջ մրցակից. աղմուկ-աղաղակ մի կողմից հնարաւորութիւն է տալիս իշխանութեան յանցաւոր դէմի մասին քաղաքական յայտարարութիւններ անել, միւս կողմից մրցակցային հարթութիւնը պահում է տեղապտոյտի, ցիկլի մէջ:

Հետեւաբար, քաղաքացիական պայքարի առաջապահ խմբերին հարկաւոր է գտնել ցիկլից դուրս գալու ճանապարհը: Դրա պոտենցիալը նրանք ունեն, քանի որ հենց նրանք են ի վերջոյ այդ առումով քաղաքացիական պայքարի բաւական արդիւնաւէտ օրինակները պահանջել՝ Մատթոյի պուրակ, Թուրքիայի ջրվէժ, 100 դրամ, ԴէՄԵՄ շարժման առաջին փուլ:

Ոստիկանութեան հետ բախումներից գուցէ հնարաւոր չէ խուսափել, բայց պէտք է խուսափել դրանց՝ տուեալ իրավիճակի եւ գործընթացի առանցքում յայտնուելուց: Բախումը չպէտք է լինի տեղի ունեցածի գլխաւոր իրադարձութիւնը: Հնարաւոր է, որ բոլորը հայտնեն ոստիկաններին, հայտնեն իշխանութեանը հերթական անգամ, ասեն ամենասուր եւ թունդ բաները, բայց դա դուրս է բերում գոլորշին, իսկ «ճաշը» մնում է հում:

Խնդիրը «ճաշը» եփելն է: Հետեւաբար, պէտք է գալ մեթոդաբանական վերանայումների, որի առանցքում պէտք է լինի յուզող հարցը հանրային հնարաւորինս

լայն շրջանակների հասցնելը: Դրա համար պէտք է մանրակրկիտ աշխատանքը տարբեր շերտերի հետ, ինչն իր հերթին կարող է լինել նաեւ պայքարի մեթոդաբանական վերանայումների գործընթացի արդիւնաւէտութիւնը պայմանաւորող գործօններից մէկը:

Յատկապէս տուեալ խնդրի պարագայում, անհրաժեշտ է աշխատանք էլեկտրաէներգիան սպառող քաղաքացու հետ, փորձելով քաղաքացիական անհնազանդութեան տարբերակը, երբ մարդիկ պարզապէս զանգուածաբար չեն վճարի էլեկտրաէներգիայի դիմաց: Խօսքով իհարկէ այդ տարբերակը գայթակղիչ է, բայց հասկանալիօրէն դժուար է դրան հասնել ու հասարակութեանն այդ անհնազանդութեանը հասցնելը: Բայց եթէ թէկուզ ամէն օր Հանրային ծառայութիւնները կարգաւորող յանձնաժողովի մօտից տասնեակ քաղաքացիներ բերման ենթարկուեն, այդ ամէնը ոչինչ է լինելու, եթէ հարկը հազարները վճարելու են թանկացած էլեկտրաէներգիայի համար:

Բոլոր դէպքերում ակնյայտ է, որ քաղաքացիական պայքարի գործընթացը հասել է մի հանգրուանի, որտեղ աւելի ու աւելի ակնառու է դառնում հասարակութեան հետ համակարգային աշխատանքի ռազմավարութեան բացակայութեան խնդիրը: Դա մի կողմից թոյլ չի տալիս քաղաքացիական յաջողութիւնների ամբողջում հանրային գիտակցութեան լայն շրջանակում, միւս կողմից թոյլ է տալիս իշխող համակարգին «մարտավարական չլոցիի» ենթարկել քաղաքացիական պայքարը:

«ԼՐԱԳԻՐ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱՎԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԲՀԿ-ական Պատգամաւորը Յնարաւոր է Զամարում Ռոբերտ Քոչարեան - Քառեակ Զամագործակցութիւնը

«Ազատութեան» հետ զրոյցում «Բարգաւաճ Հայաստան»-ի խորհրդարանական խմբակցութեան պատգամաւոր Ստեփան Մարգարեանը համոզմունք յայտնեց, թէ Ռոբերտ Քոչարեան - քառեակ համագործակցութիւնը հնարաւոր է:

«Ողջունում եմ եւ շատ ուրախ եմ, որ երկրորդ նախագահը, ունենալով երկարատեւ կառավարման, Հայաստանը ղեկավարելու փորձ եւ աւելի լաւ ծանօթ լինելով այդ իրավիճակներին, ինքը գրեթէ նոյն գնահատականներն է տալիս, ինչ քառեակի կողմից հրապարակուել է», - ասաց Մարգարեանը՝ յաւելելով, որ Քոչարեանի հետ համագործակցութեան հնարաւորութիւնն տեսնում է. - «Բայց սա արդէն ապագայի խնդիր է: Ես կարծում եմ, ով կիսում է քառեակի մօտեցումները, քառեակի նշած խնդիրները եւ դրանք լուծելուն ուղղուած ջանքերը, բոլորի հետ պէտք է համագործակցել»:

Անդրադառնալով հնչող այն տեսակէտներին, թէ Ռոբերտ Քոչարեանի հարցազրոյցը ցոյց է տալիս, որ նա ազդեցութիւն ունի քաղաքական գործընթացների, այդ թւում քառեակի վրայ՝ Մարգարեանը հաւաստիացրեց, որ այս պահին «Քոչարեանը քառեակի հետ յարաբերութիւններ չունի»: Դիտարկմանը, թէ շատերը պատահական չեն համարում, որ երկրորդ նախագահի եւ քառեակի մօտեցումները համընկնում են, պատգամաւորն արձագանքեց. - «Դա նշանակում է մի բան՝ քառեակը ճիշդ ուղու վրայ է, ճիշդ է մատնանշել այն խնդիրները, որոնց մասին խօսում են բոլորը եւ այդ թւում նաեւ Քոչարեանը»:

ԲՀԿ-ի ներկայացուցիչը չի կիսում Ռոբերտ Քոչարեանի հասցէին հնչող քննադատութիւնը, թէ

նա իրաւունք չունի խօսելու, քանի որ բոլորը լիջում են իր պաշտօնավարման տարիներին կնքուած կասկածելի գործարքներն ու կոռուպցիայի մակարդակը. - «Ես համաձայն չեմ, որ ոչ թափանցիկ գործարքներ են եղել այն ժամանակ: Եթէ ինչ-որ ժամանակ նոյնիսկ ինչ-որ բան տեղի ունեցած լինի, կարծում եմ, երկիրը դատապարտուած չէ կրկնելու նոյնը, չէ՞: Ես կարծում եմ, որ եթէ Քոչարեանը խօսում է այդ մասին, ուրեմն ինքը վստահ է, որ իր ժամանակ յամենայն դէպս այդ աստիճան չի եղել»:

Հայ ազգային կոնգրէսի մօտեցումները Ռոբերտ Քոչարեանի հարցում կտրուկ տարբերում են: ՀԱԿ-ի խորհրդարանական խմբակցութեան քարտուղար Արամ Մանուկեանը Ռոբերտ Քոչարեանին ընդհանրապէս քաղաքական գործիչ չի համարում. - «Շատ շուտուանից ինձ համար այդպիսի քաղաքական գործիչ գոյութիւն չունի»:

Մանուկեանը նշեց, որ խօսում է իր անունից, բայց յաւելեց, որ Հայ ազգային կոնգրէսում այդ տեսակէտը գերիշխող է:

Յիշեցնենք, yerkir.am-ին տուած հարցազրոյցում Ռոբերտ Քոչարեանն անդրադարձել էր ոչ իշխանական ուժերի պահանջներին՝ ըստ էութեան պաշտպանելով դրանք: Մասնաւորապէս, խօսելով «Որոտան Հէկ»-ի վաճառքի մասին՝ նա ասել էր, թէ այդ գործարքի անօրինականութիւնն այնքան մեծ է, որ դրան անհնարութիւն ունեցող անձինք վաղ թէ ուշ պատասխանատուութեան են ենթարկուելու: Ռոբերտ Քոչարեանը յորդորել է վերանայել համաձայնագիրը կամ ընդհանրապէս հրաժարուել «Որոտան Հէկ»-ի վաճառքից:

«Ստուերի Դէմ Պայքարը Իշխանութեան Զերթական Բեմականացումն է»

«Ստուերի դէմ կառավարութեան պայքարն ուղղակի բեմականացում է», - «Ազատութեան» հետ զրոյցում այսպէս որակեց «Հայկական ժամանակ»-ի տնտեսական մեկնաբան Հայկ Գէորգեանը ամիս առաջ վարչապետ Յովիկ Աբրահամեանի արած այն յայտարարութիւնը, թէ մինչեւ Յուլիսի 1-ը կա՛մ գործարարները սեփական ցանկութեամբ կը սկսեն աշխատել հաւասար դաշտում եւ դուրս կը գան ստուերից, կա՛մ այդ նպատակին հասնելու համար կառավարութիւնը կ'օգտագործի իր լծակները:

Յիշեցնենք, որ Աբրահամեանը նման յայտարարութիւն էր արել Մայիսի 14-ին խոշոր գործարարների հետ հանդիպման ժամանակ: Իսկ անցած Ուրբաթ Դիշիթեք բիզնես ֆորումին վարչապետը մասնաւորապէս նշել էլ, որ Յուլիսի 1-ից տասնօրեակը մէկ հանրութեանը տեղեկացնելու են՝ որ հարկատուն ինչքան հարկ է վճարել, իսկ այն հարկատուները, ովքեր կը փորձեն խախտել՝ կառավարութիւնն իր կոշտ դիրքորոշումը կը ցուցաբերի:

Գէորգեանի խօսքով՝ ստուերի «իրաւատէրը» հենց իշխանութիւնն է, հետեւաբար՝ եթէ իշխանութիւնը պայքարում է դրա դէմ, ապա ինքն իր դէմ է պայքարում. - «Իշխանութեան վերահսկողութեան տակ գտնուող բիզնէսը, էն բիզնէսը, որը իշխանութեանը ստուերայի ն գումարներ է վճարում՝ մոծուում, ինչպէս ասում են հայերէնում: Այնպէս որ, որեւէ անակնկալի սպասել պէտք չէ, որեւէ պայքար չի լինելու, լինելու է շատ մեծ աղմուկ ստուերի դէմ պայքար անունով: Որեւէ ակնկալ

լիք ես, իհարկէ, չունեմ»:

Հարցին, թէ որն է այս բեմադրութեան նպատակը, Գէորգեանը պատասխանեց. - «Եթէ մենք լարենք մեր լիշողութիւնը, ստուերի դէմ պայքարի ալիքների մենք շատ ենք հանդիպել: Օրինակ՝ հենց վերջին մի քանի տարիների ընթացքում թէկուզեւ: Օրինակ, լիշո՞ւմ էք՝ Սերժ Սարգսեանն ու Տիգրան Սարգսեանը իրար հետ որ հանդիպել էին, [նախագահը] ասաց՝ զլիւից պէտք է բռնել, ու մասներով ցոյց տուեց, որ պէտք է խոշորի զլիւից բռնել՝ դա հենց կոռուպցիայի դէմ պայքարի հերթական ալիքներից էր: Պայքարը ես ամէն տեղ կը վերցնէի չակերտների մէջ»:

Տնտեսական մեկնաբանը վստահ է՝ տասնօրեակը մէկ կառավարութիւնն իր հաշուետուութիւններում ցոյց է տալու, որ այդ ընթացքում հարկերն աւելացել են, բիզնէսն էլ ստուերից դուրս է եկել:

«Սկզբնական շրջանում, իհարկէ, ցուցանիշներ կ'ապահովեն, որեւէ խնդիր չկայ: Ես այն ժամանակ էին դեռ կանխատեսում, որ կը լինի եկամուտների որոշակի աճ, բայց դա կը լինի սկզբնական շրջանում: Եկամուտների աճը կը լինի գների աճի շնորհիւ, ոչ թէ օլիգարխների կամ խոշոր բիզնէսի եկամուտների՝ ստուերային եկամուտների նուազեցման հաշուին, այլ՝ գների աճի հաշուին: Մեզ երկար սպասել պէտք չի, մօտաւորապէս կէսից մէկ տարուայ ընթացքում նոյնիսկ պաշտօնական ցուցանիշներով կ'ապացուցուի, որ ստուերը Հայաստանում չի նուազել, իսկ եթէ նուազել է՝ չնչին, վատ տոկոսներով», - ասաց Հայկ Գէորգեանը:

«Նաւասարդ Կճոեանն Ու Տիգրան Սարգսեանն Այս Գործի Զետ Կապ Չունեն» Աշոտ Սուքիասեանը Շուտով Յուցմունք Կը Տայ

«Օֆշորային սկանդալում ներգրաւուած, գործարար Աշոտ Սուքիասեանը պատրաստուած է առաջիկայ օրերին ցուցմունք տալ, որից յետոյ էլ արդէն բոլորի համար պարզ կը լինի, որ այս գործում ոչ մի սենսացիա չկայ, Տիգրան Սարգսեանն ու Նաւասարդ արքեպիսկոպոս Կճոեանն էլ գործի հետ կապ չունեն»:

Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասաց Աշոտ Սուքիասեանի պաշտպան Եուրիկ Խաչատրեանը: «Աշոտ Սուքիասեանը կարճ ցուցմունք տուել է, որ իրեն մեղաւոր չի ճանաչում, ունի համապատասխան փաստաթղթերը, որ պէտք է ներկայացնենք: Աշոտ Սուքիասեանը համոզուած է, որ իրեն սխալ մեղադրանք է առաջադրուել: Նախաքննութիւնը ցոյց կը տայ ամէն ինչ: Օֆշորային սկանդալը վերացական է, սա տնտեսական գործ է, փաստաթղթային: Եթէ անձը ցոյց է տալիս փաստաթղթերով, թէ որտեղ ինչքան գումար է ծախսել, ապա սխալ է խօսել օֆշորի եւ նման այլ թեմաներով: Պարզապէս փորձում

են շեղել բուն թեմայից: Սպասենք նախաքննութեանը», - ասաց նա:

Պաշտպանը համոզուած է, որ մինչեւ Աշոտ Սուքիասեանի յայտնուելը՝ ամէն ինչ միակողմանի է ներկայացուել, իսկ հիմա արդէն իր պաշտպանեալը կը տայ բոլոր հարցերի պատասխանները: Մեր հարցին՝ արդեօք Աշոտ Սուքիասեանը գործել է Տիգրան Սարգսեանի եւ Նաւասարդ արքեպիսկոպոս Կճոեանի հետ՝ Եուրիկ Խաչատրեանն ընդգծեց. «Դատական նիստի ժամանակ, երբ որոշուած էր խափանման միջոցը, ներկայացուեց Փայլակ Հայրապետեանի ցուցմունքը, որտեղ նա ասել էր, որ Ձեր նշած անձինք կապ չունեն այս գործի հետ, ինքը նման տեղեկութիւններ չունի: Աշոտ Սուքիասեանն ամէն դէպքում նման անձանց մասին չի խօսել, նման թեմաներ չկան արծարծուած: Իմ պաշտպանեալը ցուցմունք կը տայ եւ ամէն ինչ պարզ կը լինի»:

Նշենք, որ Աշոտ Սուքիասեանը Վրաստանից արտաքսանուել է Յունիսի 19-ին եւ նոյն օրն էլ կալանաւորուել է:

Սերժ Սարգսեանը Զաւանութիւն է Տուել Սահմանադրական Բարեփոխումների Յանձնաժողովի Առաջարկներին

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանն Յունիս 25-ին հանդիպել է ՀՀ նախագահին աւելի քան սահմանադրական բարեփոխումների մասնագիտական յանձնաժողովի անդամների հետ: Հանդիպման ընթացքում ներկայացուել են սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի հանրային քննարկումների ընթացքը եւ միջանկեալ արդիւնքները:

Յանձնաժողովի նախագահ, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Յարութիւնեանը գոհունակութիւն է յայտնել հանրային քննարկումների ընթացքի եւ բովանդակութեան կապակցութեամբ, նշելով, որ սահմանադրական բարեփոխումների գործընթացի նկատմամբ հասարակութեան հետաքրքրութիւնը բաւականին մեծ է, իսկ քննարկումների մասնակիցների ակտիւութիւնը՝ սպասելի բարձր: Նա նաեւ բարձր է գնահատել քննարկումների կազմակերպման գործում ԵԱՀԿ երեւանեան գրասենեակի, Հայաստանում ԵՄ պատուիրակութեան, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալութեան եւ գերմանական միջազգային համագործակցութեան ընկերութեան («ՋԻ-ԱՅ-ՉԵԹ») ցուցաբերած օժանդակութիւնը:

Գագիկ Յարութիւնեանը յայտնել է նաեւ, որ կայացած հանդիպումների ժամանակ առաջարկութիւններ են եղել՝ հայեցակարգի նախագծի հանրային քննարկումները շարունակել տարբեր ձեւաչափերով, այդ թւում՝ քննարկումներ անցկացնել մարզերում, ինչպէս նաեւ քննարկումների արդիւնքներն ամփոփել միջազգային փորձագիտական կառույցների հետ:

Յանձնաժողովի անդամները եւս անդրադարձել են լրացուցիչ քննարկումների ձեւաչափը եւ աշխարհագրութիւնը ընդլայնելու հասարակական պահանջարկին: Միաժամանակ, նկատի ունենալով հայեցակարգի քննարկումների ընթացքում բարձրացուած բազմաթիւ հարցերի լայն շրջանակը, դրանք համակողմանի վերլուծելու կարեւորութիւնը, ինչպէս նաեւ լրացուցիչ հանրային քննարկումները պատշաճ կազմակերպելու եւ անցկացնելու անհրաժեշտութիւնը, առաջարկուել է հանրային քննարկումների ժամկետը երկարաձգել առնվազն երեք ամսով:

Սերժ Սարգսեանը նշել է, որ հայեցակարգի նախագծի հանրային քննարկումները ծառայում են այն նպատակին, ինչի համար ձեռնարկուել են: Նա նաեւ կարեւորել

է սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծում արծարծուած բոլոր հարցերը խորութեամբ ուսումնասիրելու, ինչպէս նաեւ երկրի համար կենսական նշանակութիւն ունեցող բոլոր խնդիրները պատշաճ քննարկելու

անհրաժեշտութիւնը: Հանրապետութեան նախագահը հաւանութիւն է տուել յանձնաժողովի ներկայացրած առաջարկութիւններին՝ նշելով, որ դրանք կստանան համապատասխան իրաւական ամբողջութիւնը:

ԼՈՒՐԵՐ

«Հայաստանը պատրաստ է աջակցութիւն ցուցաբերելու Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեանը»։ Սերժ Սարգսեան



Նախագահ Սերժ Սարգսեան եւ Երուսաղէմի Հայոց Պատրիարք Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեան հանդիպումի ընթացքին

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանն Յունիս 26-ին ընդունել է Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին:

Հանրապետութեան Նախագահը եւ Ամենապատիւ Պատրիարքը գրուցել են ազգային-եկեղեցական հարցերի, Հայաստանի Հանրապետութեան եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու միջեւ հաստատուած սերտ համագործակցութեան, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան գործունէութեան, ինչպէս նաեւ աշխարհասփիւռ մեր ժողովրդի կեանքում Հայոց եկեղեցու դերի եւ նշանակութեան հարցերի շուրջ:

Նախագահ Սերժ Սարգսեանը մեծապէս կարեւորել է սուրբ

հողում բազմադարեայ պատմութիւն եւ հարուստ ավանդույթ ունեցող Երուսաղէմի նուիրապետական Աթոռի գործունէութիւնը հայոց հոգեւոր եւ մշակութային ժառանգութիւնը պահպանելու եւ այն գալիք սերունդներին փոխանցելու գործում:

Հաշուի առնելով Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բացառիկ առաքելութիւնը հայ ժողովրդի հոգեւոր կեանքում՝ նախագահը վստահեցրել է, որ Հայաստանի Հանրապետութիւնը պատրաստ է ըստ անհրաժեշտութեան աջակցութիւն ցուցաբերելու Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեանը՝ իր այդ կարեւորագոյն առաքելութեան իրականացման ճանապարհին:

Ինչո՞ւ են Երուսաղէմում Ծեծել Հայ Հոգեւորականներին

Օրթոտոքս հրեաները Յունիսի 15-ին Երուսաղէմի կենտրոնում՝ Դաւիթի աշտարակի մօտ, ծեծի են ենթարկել հայ հոգեւորականներին, որովհետեւ վերջիններս նկատողութիւն են արել նրանց: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասաց Արիս արքեպիսկոպոս Շիրանեանը:

«Հրէական մեծ բազմութիւնը եկել էր Երուսաղէմ տօնակատարութեան համար, եւ մեր երկու հոգեւորականներն էլ դրսում էին գտնուում՝ բազմութեան մէջ: Այդ ժամանակ երկու հրեաներ թքել են եւ կարապետ սարկաւազ Հայրապետեանը նկատողութիւն է արել, այդ պատճառով էլ նրան խփել են, իսկ յետոյ էլ արդէն Հայր Շնորհքին: Փառք Աստծոյ, մարմնական վնասուածքներ չկան», - ասաց նա:

Արքեպիսկոպոսի խօսքով՝ նման դէպքերը Երուսաղէմում յաճախ են լինում, սակայն ոստիկանութիւնը երբեք ոչ մէկին չի ձերբակալում:

«Ոստիկանութիւնը իմացաւ, բայց ոչ մէկին էլ չի ձերբակալել: Նման դէպքեր շատ են լինում: Հրեաները ոչ թէ հայերի նկատմամբ են այդպէս վարում, այլ մեր կրօնի», - ակեյացրեց նա:

Աւելի վաղ NEWS.am-ը յայտնել էր, որ Յունիսի 15-ին Երուսաղէմի կենտրոնում Դաւիթի աշտարակի մօտ, ոստիկանական բաժանմունքի հարեանութեամբ մի խումբ օրթոտոքս հրեաներ ծեծի են ենթարկել երկու հայ հոգեւորականի՝ Դիակոն Կարապետ Հայրապետեանին ու Հայր Շնորհքին:

Նախարար Նալբանեան Յայտարարեց

Շարունակուած էջ 1-էն

Իսկ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը իր կարգին ակեյցուց, որ Արձանագրութիւններու ստորագրումէն առաջ եւ յետոյ իրենք պատրաստակամութիւն չաչտնած էին ներդրում ունենալու այն ձեւերով, որոնք ընդունելի կ'ըլլան եւ՝ Հայաստանի, եւ՝ Թուրքիոյ համար:

Լաւրով իր պաշտօնական այցի ընթացքին նաեւ քննարկած է Եւրասիական Միութեան Հայաստանի անդամակցութեան հարցը: Հայաստանի նախագահի մամուլի գրասենեակի այս առթիւ

տարածած հաղորդագրութեան մէջ ըստուած է, - «ՌԴ արտգործնախարարը տեղեկացրել է նաեւ, որ հայ գործընկերոջ հետ այդ ամէնի հետ միասին քննարկել են Եւրասիական տնտեսական ինտեգրացիային Հայաստանի միանալու գործընթացները: Նա յոյս է յայտնել, որ այսօր լաւ լուրեր կ'առաջանան Սոչիից, որտեղ անցկացւում են համապատասխան խորհրդատուութիւններ»:

Մայիս 29-ի, Աստանայի մէջ տեղի ունեցած զագաթի ժողովի ժամանակ նախագահ Սերժ Սարգսեան խնդրած էր մինչեւ Յունիս 15 վերջին ժամկէտ սահմանել՝ Եւ-

«Անգլերէնը Պաշտօնական Հանդիպումներում Նոյնպէս Տարածուած Է, Բայց Սեւեռուծ Են Ռուսերէնի Վրայ»։ Արմէն Աշոտեան

Ռուսաց լեզուով անցկացուող պետական հանդիպումների ժամանակ ռուսերէնից հայերէն թարգմանութեան բացակայութիւնը կԳ նախարար Արմէն Աշոտեանը օրէնքի խախտում չի համարում, ըստ նրա՝ պարզապէս որոշ լրատուամիջոցներ շատ են սիրում սեւեռուծել Ռուսաստանի եւ ռուսերէնի վրայ: Այս մասին Յունիսի 25-ին, լրագրողներին ասաց Արմէն Աշոտեանը՝ պատասխանելով հարցին, թէ ինչու միջոցառումների՝ այդ թուում ռուս լրագրող Դմիտրի Կիսելցովի եւ հայ պատգամաւորների հանդիպման ժամանակ, պետական մարմինները ռուսերէնին զուգահեռ հայերէն թարգմանութիւն չեն ապահովել:

«Այդ փաստերը գոյութիւն ունեն ոչ միայն ռուսաց լեզուի հետ կապուած: Բազմաթիւ կոնֆերանսներ եւ սեմինարներ կան, որոնք անգլերէն են, դրանց մասնակցում են պետական պաշտօնեաները, բայց զուգահեռ թարգմանութիւն նոյնպէս չի ապահովուում: Ռուսերէնն այս պարագայում գուցէ ցայտուն է երեւում, որովհետեւ պաշտօնեաների մեծ մասը ռուսերէն գիտի, իսկ անգլերէնն այդ պատճառով գուցէ մնում է ստուերում: Բայց ասեմ, որ Հայաստանում անգլերէն կազմակերպուող միջոցառումների թիւը ռուսերէնից պակաս չէ», - ասաց Արմէն Աշոտեանը:

Նախարարը նշեց, որ որեւէ վտանգ չի տեսնում այս երեւոյթի մէջ: Նրա խօսքով՝ այսպիսի դէպքերը «Լեզուի մասին» օրէնքի խախտում չեն, պէտք է չեմոցիոնալ երանգ հաղորդել դրանց:

Անդրադառնալով հարցին, թէ նախարարութիւնն ինչ է անում «Լեզուի մասին» օրէնքը պահպանելու ուղղութեամբ, նախարարն ասաց. «Եթէ օրէնքն ուղիղ կար-



Նախարար Արմէն Աշոտեան

դաք, մենք որեւէ գործառույթ չունենք: Ուղղակի որոշ լրատուամիջոցներ շատ են սիրում սեւեռուծել Ռուսաստանի, Մոսկուայի եւ ռուսերէնի վրայ, ցաւօք սրտի, իրենց համարժէք պատասխանող լրատուամիջոցներ, որոնք կարող էին սեւեռուծել վաշինգտոնի, Ամերիկայի եւ անգլերէնի վրայ, չկան, թէ չէ դուք իրար կը չէգործացնէիք, եւ մենք էլ բացառապէս կը զբաղուէինք մեր գործով»:

Յիշեցնենք, որ Յունիսի 11-ին, ԱԺ-ում հայ պատգամաւորների ու լրագրողների հետ հանդիպման ժամանակ Դմիտրի Կիսելցովը յանդիմանական տոնով յայտարարել էր, թէ Հայաստանում ռուսերէնը մոռանում են, որ Հայաստանում միայն երկու դպրոց կայ ռուսական եւ հարց էր ուղղել, թէ ինչ են անում ՀՀ իշխանութիւնները այդ նահանջը կանխելու համար: Նա առաջարկել էր ակեյացնել ռուսական դպրոցների թիւը եւ յատուկ կարգավիճակ տալ ռուսերէնին: Կիսելցովը վրդովուել էր, որ Երեւանում տաքսու վարորդը ռուսերէն չի կարողացել իրեն հաշիւն ասել: Ի պատասխան՝ հայ պատգամաւորները սկսել էին արդարանալ, թէ Հայաստանում ռուսերէնը չեն մոռանում:

Հալէպի Մէջ ՀՀ Գլխաւոր Հիւպատոսը

Շարունակուած էջ 1-էն

տերն էլ Հալէպի այլ՝ ակելի ապահով թաղամասեր, որտեղ ունեն հարազատներ եւ բարեկամներ, իսկ ոմանք էլ ուղղակի ապաստան են գտել Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու տարածքում: Զգալի են նաեւ մեր հայրենակիցների կրած նիւթական վնասները, այս իրավիճակում շատերը գրկուել են նաեւ իրենց գոյութիւնը պաշտպանելու միջոցներին»:

Հիւպատոսութեան աշխատանքներուն անդրադառնալով Տիգրան Գեորգեան ըսած է, - Հաշուի առնելով քաղաքի հայութեան առջեւ ծառայած դժուարութիւնները, այսօր գլխաւոր հիւպատոսութիւնը ժամանակաւորապէս տեղափոխուել է հայաշատ թաղամասերին ակելի մօտ տարածք, որպէսզի մեր հայրենակիցների համար ակելի դիւրին լինի հիւպատոսութիւն այցելելը: Բացի այդ, Յունիս ամսից սկսած վերսկսել ենք քաղաքացիութեան դիմումների ընդունումը, ինչը ժամանակաւորապէս

կասեցուել էր փոստային կապի խալառ բացակայութեան պատճառով: Եւ պէտք է նշեմ, որ արդէն մօտ երկու հարիւր մեր հայրենակիցներ են դիմել ՀՀ քաղաքացիութիւն ստանալու խնդրանքով: Գիտէք, հաւանաբար, որ համաձայն քաղաքացիութեան մասին ՀՀ օրէնքի, ազգութեամբ հայերը քաղաքացիութիւն են ստանում պարզեցուած կարգով, իսկ համաձայն ՀՀ կառավարութեան համապատասխան որոշման, Սիրայի քաղաքացիները կարող են ՀՀ անձնագրեր ստանալ նաեւ ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութիւններում»:

Խօսելով Հայկական կազմակերպութիւններու տարած աշխատանքներու մասին, ՀՀ հիւպատոսը շեշտած է որ, Հալէպի հայութեան վիճակը շատ ակելի ծանր պիտի ըլլար, եթէ այդտեղ իրենց արդիւնակէտ եւ համակարգուած գործունէութիւնը չծաւալէին համայնքային մեր բոլոր կառույցները, որոնք անցած են արտակարգ իրավիճակում մէջ աշխատելու դրութեան:

րասիական Միութեան Հայաստանի անդամակցութեան պայմանագրի ստորագրման համար: Սակայն, ակելի ուշ հրապարակուած գագաթնաժողովի որոշման մէջ ըս-

ուած էր, որ մինչեւ Յունիս 1 պէտք է նախապատրաստել այդ պայմանագիրը, բայց այդ փաստաթուղթը ե՞րբ ստորագրուելու մասին խօսք չկար:

ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԱՆՔԱՐԱՅԻ ՄԷՋ



Յունիս 14-ին Անքարայի մէջ խորհրդաժողով մը կազմակերպուեցաւ նուիրուած Փարամային եւ Հնչակեան Քսան Կախաղաններու յիշատակին, որոնք իրենց կեանքը նուիրեցին Արդարութեան եւ Ազատութեան գաղափարներուն համար:

Քսանները նահատակուեցան 15 Յունիս 1915-ին, երբ արդէն Հայոց Յեղասպանութիւնը սկսած էր: Անոնք ծրագրած էին սպաննել իթթիհատ վէ թերաքըրի եռապետութեան անդամները՝ Թալէաթ, էնվէր եւ ճեմալ: Այդ որոշումը առնուած էր Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան 7-րդ համագումարին, որ կայացաւ 7 Սեպտեմբեր 1913-ին Ռուսաստանի Քոնսթանդնուպոլիսի մէջ:

Անքարայի ձեռնարկը կայացաւ Ընկերավարական Վերակազմեալ Կուսակցութեան (Socialist Yeniden Kurulus Partisi) կեդրոնատեղիին մէջ: Խօսք առին Ֆրանսայի ՄԴՀ Վարիչ Մարմնի ատենադպիր ընկ. Սարո Մարտիրեան, մտաւորական Սայիտ Չեթինօղլու եւ Ընկերավարական Վերակազմեալ Կուսակցութեան Անքարայի շրջանի ատենապետ Մուսթաֆա Քահա:

Խորհրդաժողովին սկիզբը, ներկաները մէկ վայրկեան յոտնկայա լուռութեամբ յարգեցին նահատակներուն յիշատակը:

Ընկեր Սարո Մարտիրեան յայտարարեց. «Չէի կրնար երեւակայել որ պիտի կարենամ արտայայտուել թուրք քաղաքացիներու առջեւ, որոնք հազուադէպ կը հանդիպին հայերու, տեսնել երիտասարդներ որոնք յոտնկայա, բռնակցաները բարձրացուցած, եկած են յարգելու Փարամային եւ ընկերներուն յիշատակը, այն ալ, թուրքիոյ խորհրդարանէն եւ վարչապետի գրասենեակէն հարիւր յիսուն մեթր հեռավորութեան վրայ: Ի հարկէ մենք գիտենք թուրք պետութեան ժխտողական քաղաքականութիւնը եւ թուրք քաղաքացիական հասարակութեան տարած աշխատանքը լուսաբանելու համար իր պատմութիւնը: Պէտք է նշենք որ վերջին տարիներուն թուրքիոյ մէջ ականատես կ'ըլլանք շարժումի մը, որ տարուէ տարի հող կը շահի եւ ուշ կամ կանուխ

իր ազդեցութիւնը պիտի ունենայ»:

Այս առնչութեամբ, ՄԴՀ-Ֆրանսայի շրջանի Վարիչ Մարմնի ատենապետ ընկեր Գէորգ Սաչլեան ըսաւ, «ՄԴՀ Կուսակցութեան գտնուած բոլոր երկիրներուն մէջ, Մէք վառ պահեցին Քսաններու յիշատակը միշտ շեշտելով, որ անոնք կը պատկանին բոլոր հայ ժողովուրդին: Նորութիւնը այն է, որ առաջին անգամ ըլլալով թուրք ընկերավարական կուսակցութիւն մը կ'ընդունի Փարամային, որպէս թուրքիոյ ընկերավարական շարժման առաջնորդ, եւ կ'ոգեկոչէ անոր յիշատակը մայրաքաղաք Անքարայի մէջ»:

Ընկեր Սարո Մարտիրեան այս յառաջդիմութիւնը կը վերագրէ երկու գործօններու: Մէկ կողմէ թուրք հասարակութեան զարգացման, Հայոց Յեղասպանութեան հարցով, շնորհիւ Հրանդ Տինքին եւ Սայիտ Չեթինօղլուին, որն առաջինն էր, թուրքիոյ մէջ 2007-ին յողուածներ հրատարակեց Քսան Կախաղաններուն մասին: Չմոռնանք նաեւ Ռակիփ Զարաթօլուն, որ օժանդակեց այդ պատմութեան ծանօթացման, իր մասնակցութեամբ առաջին ձեռնարկներուն, որոնք տեղի ունեցան 13-15 Յունիս 2013-ին, Կ. Պոլիսի մէջ:

Ընկեր Գէորգ Սաչլեան եզրափակեց ըսելով. «Որպէս հայկական քաղաքական կազմակերպութիւն, մենք կը շարունակենք մեր հրապարակայնութեան քաղաքականութիւնը թուրք ձախակողմեան կուսակցութիւններու հանդէպ, ձեռք կ'երկարենք անոնց: Անոնք կարենաւ որ դեր ունին Հայոց Յեղասպանութիւնը ծանօթացնելու թուրքիոյ հասարակութեան, եւ հող պատրաստելու, որ թուրք պետութիւնը ճանչնայ եւ հատուցէ հայերուն»:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը դարձեալ կոչ կ'ուղղէ ստեղծելու համար միացեալ հարթակ մը, որ կը խմբէ տարբեր երկիրներէ, քաղաքացիական եւ քաղաքական ուժերը, ինչպէս նաեւ անհատներ, կազմակերպելու Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակի յիշատակման հանդիսութիւնները»:

Ֆրանսերէնէ թարգմանեց Վ. Թոսունեան

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ Ի ՊԱՏԻ ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ



Հարաւային Գալիֆորնիոյ հայ գաղութի համար յիշատակելի օր մը եղաւ Երեքշաբթի, Յունիս 17, 2014: Արդարեւ այդ երեկոյ շուրջ 400 հոգի մէկտեղուած էր Հոլիվուտի Տաղլեան մշակութային կեդրոնի հանդիսասրահը, նշելու համար Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի «էլլիս Այլընտ» պատուոյ մետալով պարգևատրուելը: Այդ օր կը գուզադիպէր նաեւ սրբազան հօր արեւմտեան թեմի առաջնորդ ընտրուելու տասնամեակին:

Ներկաներուն մէջ կը նշմարուէին Արեւմտեան թեմի նախկին առաջնորդ Գերշ. Վաչէ Արք. Յովսէփեան, Հայ Աւետ. Եկեղեցիներու տնօրէն՝ Վեր. Ճօ Մաթոսեան, Լոս Անճելոսի քաղաքապետական Խորհուրդի անդամ՝ Փոլ Գրիգորեան, ՄԴՀ-ի, ՌԱԿ-ի եւ ՀՅԴ-ի ատենապետները եւ այլ պաշտօնական անձնակազմի անդամներ:

Առաջնորդարանի Մատակարարման Կոմիտէի կողմէ կազմակերպուած սոյն շքեղ երեկոյթի բացումը կատարեց օրուան հանդիսավար իրաւաբան Արսէն Տանիէլեան: Ան արժեւորելով Յովնան Սրբազանի մատուցած օգտաշատ ծառայութիւնները ըսաւ թէ Աստուծոյ կողմէ իրեն շնորհուած կարողութիւնները դրած է ի սպաս իր ժողովուրդին:

Յաջորդաբար յոտնկայա ունկնդրուեցան ԱՄՆ-ի եւ Հայաստանի պետական հիմները, կատարողութեամբ մեցցօ սփրանօ Կարին Մուշիկեանի եւ թեմոր Արթիւր Յակոբեանի: Արժ. Տէր Աւետիս Քհնյ. Աբովեանի օրհնութեան աղօթքէն ետք տեղի ունեցաւ ճաշի սպասարկութիւնը: Սեղաններու վրայ զետեղուած զեղարտիպ գրքոյկներու մէջ տպագրուած էին Յովնան Սրբազանին ուղղուած ողջոյցնի գրութիւններ ՀԲԸՄԻ նախագահ Պերճ Սեդրակեան նէն, գոնկրէյսական Ատամ Շիֆէն եւ Պրատ Շէրմանէն, ծերակուտական Գարօ Լիւէն, երեսփոխան Մաք Կաթոյն, Լոս Անճելոսի վերակացու Մաք Անթոնովիչէն, Արարատ Տան ատենապետ իրաւաբան Զոգէֆ Կանիմեանէն եւ այլոց կողմէ:

Շքեղ սրահի հակադիր կողմերուն զետեղուած լայն պաստառներու վրայ մերթ ընդ մերթ ցուցադրուեցան Յովնան սրբազանի բազմակողմանի գործունէութեան պատկերներ տեսաներիզի վրայ:

Յովնան Սրբազանի պարգևատրուելու առիթով շնորհաւորական ջերմ ելոյթներով հանդէս եկան Լոս Անճելոսի Քաղաքապետական Խորհուրդի առաջին հայ անդամ Փոլ Գրիգորեան (որ այս առիթով պաշտօնական յայտարարագիր մը յանձնեց): Մատակարարման կոմիտէի նախագահ Տօքթ. Վահրամ Պիրիճիզ, Հայ Տարեցներու Արարատ Տան հոգաբարձութեան ատենապետ իրաւաբան Ժօզէֆ Կանիմեան, Արժ. Տ. Մանուկ Աւ. Քհնյ. Մարգարեան եւ Թեմական Խորհուրդի ատենապետ Անդրանիկ Զօրայեան: Բոլոր ելոյթ ունեցողներն ալ ըստ արժանուցյն իրենց գնահատականը ըրին Յովնան Սրբազանի եկեղեցանուէր եւ արդիւնաշատ գործերուն, մաղթելով արեւաշատութիւն եւ նորանոր յաջողութիւններ:

Գործադրուեցաւ զեղարուեստական պատշաճ յայտագիր մը մասնակցութեամբ շնորհալի արուեստագէտներ՝ Կարին Մուշիկայնի, Դոկտ. Լինտա Զուլալեանի եւ Արթիւր Յակոբեանի (mister x):

Եկած էր պարգևատրումի պահը երբ Մատակարարման Կոմիտէի անդամները բեմ հրաւիրեցին առաջնորդ Յովնան Սրբազանը իրեն փոխանցելով «էլլիս Այլընտ» պատուոյ մետալն ու անոր ընկերացող պատուագիրը, արժանանալով ներկաներու բուռն ծափահարութեանց:

Վերջաւորութեան շնորհակալական խօսքով հանդէս եկաւ մետալակիր Յովնան Սրբազանը: Ան վերանորոգեց իր ուխտը ծառայելու Աստուծոյ եւ մարդկութեան ու յարեց «Այս նուէրը կը նկատեմ հայութեան ուղղուած նուէր մը»:

Իր տեսակին մէջ եզակի ձեռնարկ մըն էր, որու ն համար կը շնորհաւորենք նախաձեռնողներն ու կազմակերպիչները:

«Պատիւս արժանաւորաց»:
Գ. Մ.

SYRIAN ARMENIAN RELIEF FUND Save Support Sustain 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104 (626) 797-7680

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104 ԱՆՐԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ԼԻԲԱՆԱՆ

ՈՒՒՏԻ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒՄ՝ 99-ՐԴ ԱՆԳԱՍ ԸԼԼԱԼՈՎ



1915թուականի Յունիս 15-էն անցած են 99 տարիներ, սակայն Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնն ու հայ ժողովուրդը հաւատարիմ կը մնան իր նահատակներու յիշատակին ու պատգամին:

Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ կախաղան բարձրացած Հնչակեան 20 հերոս դեկավարներու նահատակութեան 99 ամեակին առթիւ եւ կազմակերպութեամբ ՄԴՀԿ Լիբանանի շրջա-



Ընկ. Կիրակոս Թիւթիւնեան

նի վարիչ Մարմինն, երէկ Պէյրութի Forum De Beyrouth համալիրին մէջ տեղի ունեցաւ ժողովրդային հաւաք ու հանդիսութիւն: Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան հովանաւորութիւնը վայելող այս ձեռնարկին ներկայ գտնուեցաւ Հնչակեան Կուսակցութեան եւ լիբանանահայերու բազմութիւն մը, ղլխաւորութեամբ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Շահէ Արք. Փանոսեանի, Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան նախագահ եւ Հայկազեան Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փոլ Հայտոսթեանի, Հայ Կաթողիկէ ժողովրդապետ հայր վարդան Գազանճեանի, Պէյրութի մօտ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Աշոտ Քոչարեանի, ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեանի, փոխատենապետ՝ պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալիաքեանի եւ անդամներ Ընկ. Եղիկ Ճէրէճեանի եւ Շաւարշ Ակիմեանի, Լիբանանի շրջանի վարիչ Մարմնի ատենապետ Ընկ. Ալէքսան Բէօշլէրեանի, Հայ Բեղափոխական Դաշնակցութեան, Ռամկավար Ազատական Կուսակցութեան եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պատասխանատուներու եւ ներկայա-

ցուցիչներու, պետական երեսփոխաններ Սերժ Թուրսարգիսեանի, Ժան Օղասապեանի, Շանթ Զինչինեանի, նաեւ Պէյրութի քաղաքապետարանի անդամ եւ Հ.Կ.Բ.Մ.ի ատենապետ Արամ Մալեանի:

Հանդիսութեան բացումը երեք քայլերգներով կատարեց ՀՄՄ-ի փողերախումբը, որմէ ետք ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լուծութեամբ յարգեցին Քասններու յիշատակը: Զեռնարկին ընթացքին տեղի ունեցաւ շարք մը տեսագրութիւններու ցուցադրութիւն, որոնց ընդմէջէն ներկայացուեցան Քասններուն մասին հայ եւ թուրք գործիչներու վկայութիւններ:

«Հայաստանի տէրն ու պաշտպանը»

Լիբանանի շրջանի վարիչ Մարմնի անունով խօսք արտասանեց վարիչ Մարմնի անդամ Ընկ. Կիրակոս Թիւթիւնեանը: Ան նշեց, որ հայ ժողովուրդի պատմութեան մէջ կան ուսանելի եւ յատուկ նշանակութիւն ունեցող հանգրուաններ, իրենց դրական եւ ժխտական հետեւանքներով: «99 տարի անընդմէջ, Քասններու Կուսակցութեան հաւատաւորներն են մեզի հետ բոլոր անոնք, որոնք անհրա-



Սարգիս Հացպանեան

ժեշտ կը նկատեն հաղորդակցութիւնը հայ ազգային ազատագրական պայքարի լաւագոյն աւանդութիւններուն հետ ու չեն տառապիր հատուածական ներմտութենէ, կանգ կ'առնեն պահ մը, վառ պահելու եւ հպարտութեամբ յիշելու գերագոյն սիրանքը», ըսաւ ան: Ընկ. Թիւթիւնեանի համաձայն, Քասններուն կախաղան բարձրանալը Հայոց պատմութեան գիտակցումը, քաղաքական մեծագոյն կախաղանումն է: «Այն սկզբունք-

Ս.Դ.Յ.Կ. ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ՝ ԸՆԿ. ՅԱԿՈԲ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ «ՎԵՐԱԴԱՐՁ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՂԵՐ»

Յարգելի ներկաներ Հայ ժողովուրդի հարազատ սկունքներէն ծնունդ առած Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան, ամէնէն ճակատագրական, ամէնէն նշանակալից իրադարձութիւններէն է Հնչակեան Քսան Հերոսներու ամբողջական նուիրաբերումը եւ իթահատականներու արիւնոտ ձեռքերով անոնց կախան բարձրանալը:

15 Յունիս 1915, 15 Յունիս 2014: 99 Տարիներ կը բաժնեն մեզ Պայազիտի հրապարակին վրայ յանուն ազատութեան եւ յանուն հայ ժողովուրդի արդար դատին իթահատականներու եւ իթաղանին վրայ Քասններու նահատակութեան վեհ արարքէն:

Հարիւր տարիներ, ցատումի, պայքարի եւ ուխտի:

Հարիւր տարիներ երդումի, հաւատարմութեան եւ զաղափարական ընթացքի:

Սիրելի ընկերներ,

Հնչակեան պատմութիւնը լեցուն է հերոսական սիրանքներով: Մեր կուսակցութեան հերոսական արարքները կրակէ նիզակներու պէս կը հատեն Հայ ժողովուրդի ծանր ու մոխրագոյն ամպերով կուտակուած երկնակամարը:

Անցած ենք երկար ճանապարհ: Այդ ճանապարհը եղած է դժուարին եւ յաճախ արեան հեղեղներով լեցուն:

Բայց միանաշնակ մեր ժողովուրդի եւ կուսակցութեան ամէնէն վեհ, ամէնէն բարձր իմաստներուն յանուն յաշողած ենք հասնիլ այսօրուան:

Ու հեշտ չէ այդքան դաւերու, այդքան նենգ թշնամիներու եւ իթաղանէն անցնելով անպարտելի մնալ ու իթավարել միշտ ի մտի ունենալով Հերոս Փարամազի խօսքերը որ ան կախաղան բարձրանալու պահուն արտասանեց գոչելով՝ «Դուք մեր մարմինները կրնաք կախել միայն, իսկ մեր զաղափարը ոչ: Այս խօսքերը սովորական յեղափոխականի մը խօսքերը չեն:

Մեր երազներուն, մեր իսկական տանջանքներուն, մեր Հայաստանեան իրական տեսիլքին հաւատամքի բառերն են:

Պատմութեան դասերէն վերադառնալու համար այսօրուան հայաշխարհի խնդիրներուն հարկ կը համարեմ այստեղ մի քանի նշումներ կատարել:

Ա.- Մ.Դ.Հ.Կ.ի համար հիմնական ու մնացումն արժէք է Հայաստանի Հանրապետութիւնը: Հայաստանի հանդէպ մեր ունեցած հաւատամքը առաջնային խնդիր է ու անսակարկելի: Այսօր եւս եւ հակառակ տարբեր տեսակի մարտահրաւէրներուն, կարչած մնալով մեր սկզբունքներուն, կը մնանք հաւատարիմ գործակիցը հայրենի պետականութեան: Ճիշդ է մեզ համար ալ իտէսլական ըլլալէ շատ հեռու է այսօրուան Հայաստանը, բայց շեշտը կը դնենք անկախ Հայաստանի կայունացման եւ Արցախ աշխարհի անվտանգութեան վրայ: Հայ ժողովուրդի ամբողջական ճիգերով եւ իր որդիներու արեան գնով ազատագրուած Արցախը մեր բոլորին հպարտանքն է: Այս առումով նաեւ մեր կուսակցութեան համար հիմնախնդիր է ՄԱԿ-ի օրէնքներուն եւ ազգային ինքնորոշման չափորոշիչներուն վրայ հիմնուելով ամրագրել Լեռ-



Ընկ. Յակոբ Տիգրանեան

նային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութիւնը եւ այդ հրամայականը ճանաչելի դարձնել միջազգային բոլոր բեմահարթակներուն վրայ: Կը հաւատանք որ Հայութեան սիրտ հանդիսացող հայրենիքը, այսօրուան անկախ Հայաստանն էր ու պիտի մնայ մեր երազներուն, ազգային տեսիլքին համար իսկական եւ վերջնական խարիսխին յենարանը: Մեր մօտեցումներուն մէջ թերեւս մենք եւս քննադատենք այսօրուան կամ գալիք իշխանութիւնները բայց այդ մէկը պէտք է խանգարէ մեր տենչանքը կառչելու այս երկրին ու ամէն գնով զօրավիզ ըլլալու անոր բարեկարգման եւ կայունացման: Այստեղ կարեւոր կը համարեմ անդրադառնալ այսօր մեր հայրենիքին դիմաց ծառայած մեծագոյն վտանգին՝ արտադրազթի երեւոյթին հաւատալով, որ հայրենի իշխանութիւնները ամէն ճիգ պէտք է իրագործեն կանխելու եւ նուազագոյնի հասցնելու Հայաստանի անվտանգութեան համար մեծագոյն չարիք եղող արտադրազթի ալիքը ստեղծելով այնպիսի պայմաններ, որ մեր հայրենակիցները երբեք չմտածեն լքել իրենց սեփական հողն ու տունը:

Բ. Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման 100-ամեակին ընդառաջ մեզի համար որպէս Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն Յեղասպանութեան ճանաչման հիմնահարցը պէտք է վերածուի ազգային ծրագրի հիմունքներով ընդգծուած պահանջատիրական գործընթացի մը որուն մէջ բառերէն ու հերթական անգամ լսուած մաղթանքներէն անդին պէտք է գերակշռէ իրական գործը:

Սրբազան գործը որ պէտք է հիմնաւորուած ըլլայ պահանջատիրական իրաւացի մէքանիզմներու եւ որուն հիմնական յենակէտը եթէ Հայաստանն է ապա անոր մղիչ ուժը պիտի հանդիսանայ Սփիւռքը իր պահանջատէր եւ իրաւատէր հատուածներով: Այստեղ կարեւոր կը համարեմ մեր կուսակցութեան կողմէ ներկայացուած ու Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման 100-ամեակի ընդհանուր մթնոլորտին հետ անմիջական կապ ունեցող եւ վերջերս Երեւանի մէջ կայացած Յեղասպանութեան խնդիր բարձրագոյն յանձնաժողովին նիստին ներկայացուած երեք հիմնական կէտէր որոնք են՝

1.- Յեղասպանութեան 100-ամեակի յանձնաժողովէն պէտք է բխի մշտական մարմին մը, որուն

ԹԱՐՄ ՅՈՂԱԿՈՅՏԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ 100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՄԱՍՈՒԼՆ ՈՒ ՅՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԸ

ԴՈԿՏ. ԱԲԷԼ ՔԶՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
(Շարունակում և նախորդ թիվում)

1909Ի ՅԱԿԱՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՍԸ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ
ՄԱՍՈՒԼՆ ՄԵՋ

Զուլիջերիոյ մամուլի յօդուածներուն ընդմէջէն, կարծէք թէ մարգարէական նախատեսութիւն մը ըլլար հակայեղափոխական շարժումը, որ Երիտթուրքերու եւ «յառաջդիմական» ուժերուն դէմ իրականացաւ 1909ի Ապրիլ 12ին, ստոյգ՝ Ապտիւլ Համիտի դրդումով, համագործակցութեամբ իսլամ հոգեւորականութեան, խոշոր հողատէրերու եւ բանակի յետադիմական զինուորականներուն կողմէ: 1908-1913 թուականներու ժամանակամիջոցին, Երիտթուրքերը դեռ ուղղակի մաս չէին կազմեր Օսմ. կառավարութեան, սակայն

րուն մէջ գտնուող իրենց ջոկատներուն անմիջապէս արշաւել դէպի Կ. Պոլիս:

Սուլթանի պահպանողական եւ հակասամանադրական ուժերը, ինչպէս նաեւ Երիտթուրքերուն իշխանութեան հակառակորդները ընդամէնը երկու շաբթուան ընթացքին կը յաղթուին, որուն ի հետեւանք Սուլթան Ատիւլ Համիտ Բ. գահընկէց կը հռչակուի Երիտթուրքերու պարագլուխներէն էնվէր Պէյին կողմէ[35]:

Զուլիջերիոյ մամուլը Երիտթուրքերու հերոսական այս նուաճումը կ'արձագանգէ դրուատական մեկնաբանութիւններով: Կը գովաբանէ իրենց տրամադրութեան տակ գտնուող զինեալ ուժերուն յեղափոխութիւնը պաշտպանելու համար ցուցաբերած պատրաստակամութիւնն ու մարտունակութիւնը:

զապուրծ փրկուած հայեր մնացած են անօթեւան եւ սոված[38]: Կիլիկիոյ քրիստոնեայ հայ ազգաբնակչութիւնը ենթարկուած է անընդհատ թշուառութեան, եւ ամէն օր թերթի խմբագրութիւն կը հասնին քիւրտ ցեղախումբերու կողմէ հայերու դէմ կատարուած բռնարարքներու եւ ոճիրներու սարսափելի լուրեր[39]:

Քրիստոնեայ հայ ազգաբնակչութեան դէմ կազմակերպուած յանցագործութեան առնչութեամբ թերթը խիստ վերապահութեամբ կ'անդրադառնայ այն մասին, որ Ատանայի կառավարիչը կը հաղորդէ թէ 1400 հայերու դէմ սպանուած են 1900 մահմետականներ[40]:

1909ի Մայիսի կէսին «Ֆօլքսըրէիսթ» կրկին կ'անդրադառնայ Ատանայի ջարդերուն, իր էջերուն մէջ գրեթէ բառացի տպագրելով ֆրանսացի ակնաստես զինուորի մը հեղինակաւոր վկայութիւնը, որ լոյս տեսած էր «Ֆիկարօ»ի մէջ: Ան կը նկարագրէ ողբերգական վիճակը կործանած քաղաքին եւ Ատանայի մէջ:

«Հայերէն մինչեւ վերջին մարդը բոլոր բնակավայրերուն մէջ սպաննուած է: Այս խեղճերուն համար ընդհանրապէս անկա ընլի եղած է դիմելու ինքնապաշտպանութեան: Այդ սարսափելի տառապանքներուն մէջ՝ անոնք պիտի որ մահանալը գերադասած ըլլային», կը հաղորդէ թերթը, եւ կը շարունակէ ֆրանսացի ակնաստեսին վկայութիւնը, թէ «իրենց զինուորական ջոկատը դիակներու ամբողջ բլրակոյտեր տեսած է գետի դէմ ժողովրդային զայրոյթին ասնձազերծումը: Հայերը գաղտնի չպահեցին իրենց փայփայած բաժնուելու ծրագիրները եւ տածած յոյսը իրենց թագաւորութիւնը շուտով վերահաստատելու վերա-

Տարակոյս չկար, որ Ատանայի եւ շրջակայից մէջ հայոց դէմ այս բարբարոսութիւնը իրագործած էր տեղւոյն մահմետական բնակչութիւնը, նաեւ Սուլթան Ապտիւլ Համիտի կողմէ ստեղծուած եւ իր անունով ալ կոչուած «Համիտիէ» ջոկատները, որոնք մեծաւ մասամբ կազմուած էին քրտական սիւննի դաւանանքին պատկանող տարբեր ցեղերու ներկայացուցիչներէ, յանցագործներէ եւ ոճրագործներէ: Ի վերջոյ, աւելի քան երեսուն հազար հայերու ջարդը պէտք է ունենար պատասխանատու հեղինակ մը, իսկ այդ մէկը Զուլիջերիոյ ընկերակալական թերթերը կը տեսնեն արիւնարբու Սուլթանի անձին մէջ: Ընդհակառակը, անոնք կը հաւաստիացնեն, որ շուտով Երիտթուրքերը[42] Կ. Պոլսոյ մէջ խոտվութիւնները կարգաւորելէ ետք, պիտի վերստեղծեն երկրին ապահովութիւնը նաեւ Կիլիկիոյ տարբեր շրջաններու տարածքին: Այսպէս, «Ֆօլքսըրէիսթ» ալ բարոյական միամիտ գորակցութիւն մը կը ցուցաբերէ Երիտթուրքերուն հանդէպ, առանց անդրադառնալու, որ անոնք պակաս արիւնարբուներ չէին քան Ապտիւլ Համիտ Բ.ը, եւ անոնք իրենց մաղձոտ էութեան մէջ ցեղասպանութեան ճիւղաճիւղին ծրագրին իրականացումով պիտի գերազանցեն զիրենք նախորդող բոլոր սուլթանները, որոնք իրենց ամենադաժան երազներուն մէջն անգամ չէին տեսած մարդկութեան դէմ գործուած նման ոճիր մը:

**ՅԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՆԳՐԱԳԱՐՁԸ
ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ
ՄԱՍՈՒԼՆ ՄԵՋ**

Երիտթուրքական կառավարութեան կողմէ հայ ազգաբնակչութեան դէմ կազմակերպուած համատարած ցեղասպանութեան սահմու-



Լուսանկար մը Ատանայի Ադէտէն 1909թ.

ունենալով խորհրդարանի անդամներու մեծամասնութիւնը՝ իրենց հակակռիւն տակ կը պահէին երկրին ղեկավարութիւնը:

Սուլթանին հետ միաբանած յետադիմական այս ուժերը կը պահանջէին խորհրդարանական դրուածքին վերացումը եւ կրկին որդեգրումը «Շարիա»ի՝ իսլամական օրէնքին: Ապտիւլ Համիտ, որ ինչպէս նշեցինք, թաքուն հեղինակն էր այսպէս կոչուած հակայեղափոխական շարժումը կազմակերպելու գործին, անմիջապէս կը վաւերացնէ պահպանողականներուն առաջադրանքը եւ կը հաստատէ նոր կառավարութիւն մը: Այսպէս կը վտանգուէր ոչ միայն 1908ի յեղափոխութեամբ ամրագրուած 1876ի Միդհատեան Սահմանադրութեան կիրարկութիւնը, այլ նաեւ երկրին խորհրդարանային վարչաձեւը, ձեռք բերուած ազգերու եւ կրօնքներու միջեւ ձեւաւորուող իրաւահասարակութեան սկզբունքը:

Յեղափոխութեամբ նուաճուած ժողովուրդին իրաւունքը պաշտպանելու եւ ձախողութեան եզրին գտնուող Երիտթուրքական շարժումը փրկելու համար, ամէն կողմէ դէպի Կ. Պոլիս կը փութան «յառաջդիմական» գործերը: Ի դէպ, թերեւս ոչ այնքան Երիտթուրքերը պաշտպանելու, այլ սուլթանական ուժերը ջախջախելու միտումով, նաեւ հայ յեղափոխական կուսակցութիւնները[33], ինչպէս Հնչակեան, նոյնպէս ՀՅԴ ներկայացուցիչները, Երիտթուրքերու ղեկավարութեան կ'առաջարկեն իրենց ամբողջական օժանդակութիւնը[34], եւ կը հրահանգեն երկրին արեւելեան նահանգներուն կամ գաւառներ-

ԱՏԱՆԱՅԻ ԶԱՐԴԸ 1909 ԹՈՒԿԱԿԱՆԻՆ

Աւարտին թուրք քարոզիչը փորձած է ներկայացնել Հայոց Ցեղասպանութեան եւ Հրէական ողջակիցումին միջեւ եղած տարբերութիւնը: Հայոց Ցեղասպանութեան հարցերուն մէջ փորձագէտ ձեւանալէ ետք, Կիւնկոր խոստովանած է իր սգիտութիւնը՝ նշելով, որ՝ «Օսմանեան կայսրութեան վերջին շրջանին մասին դեռ շատ բան պէտք է իմանալ եւ շատ եզրակացութիւններ կատարել»:

Հակառակ ելոյթս խոչընդոտելու Կիւնկորի փորձերուն՝ խորհրդարանի ներկայացուցիչներն ու հիւրերը, ներառեալ՝ գիտնականներ, ընտրուած պաշտօնեաներ եւ հրէական համայնքի ղեկավարներ, զիս դիմաւորեցին յոտնկայս ծափահարութիւններով: Զարմանալիօրէն Կիւնկոր յայտնուեցաւ խորհրդարանէն ներս՝ լսելու ելոյթս, չվստահելով ձեռնարկը չեղեալ համարելու իր սեփական կարողութեան: Հակառակ անոր, որ ունկնդիրներուն բաւական ժամանակ տրուած էր որեւէ հարցում ուղղելու, սակայն Կիւնկոր եւ անոր երկու թուրք գործընկերները որեւէ հարցում չուղղեցին: Զարմանալիօրէն, երբ թուրքերը կը հեռանային խորհրդարանէն դահլիճին մէջ լսուեցաւ Կիւնկորի գործընկերներէն մէկուն ձայնը, որ կ'ըսէր. «Ձեմ հասկնար, թէ այսպի-

Շար.ք էջ 18

ԻՆՉ ԿՐ ՊԱՏԱՅԻ ԻՐԱՔԻ ՍԵՋ ԵՒ Ո՛Վ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Սիւննի-Շիիթ Հակամարտութիւնը Կը Սպառնայ Ամբողջ Միջին Արեւելքին

Միամտութիւն է կարծել, որ անցնող երեքշաբթի օր Իրաքի մէջ սկիզբ առած զինուորական գործողութիւնները կատարուեցան միայն «ՏԱՀԷՇ»-ի («Իրաքի Եւ Դամասկոսի Իսլամական Տէրութիւն») կողմէ:

Այսպէս Քարտէզի վրայ այդ տարածքներուն մօտէն նայողին համար պարզ պիտի դառնայ, որ առանց տեղական նեցուկի «ՏԱՀԷՇ»-ը ունակութիւն չունի երեքշորս օրուան ընթացքին գրաւել Մուսէլ, Թքրիթ (Իրաքի նախկին նախագահ Սատտամ Հիւսէյնի ծննդավայրը) Սալահ էլ Տիւն, Սամարա եւ Նաւթի մեծագոյն պաշարները պարունակող Քէրբուք քաղաքները:

Այսօր նոյն այդ զինեայները յայտարարած են, որ իրենց համար գերագոյն նպատակ է գրաւել մայրաքաղաք Պաղատան ու Շիիթներու համար կարեւորագոյն սրբավայր համարուող Քարպալլա քաղաքը:

Երեւելի է նաեւ, որ գործողութեան ընթացքին տեղի չունեցան աչքի զարնող էթնիք գտումներ իսկ շրջաններէն զաղթող իրաքցիները հեռացան, ոչ թէ «Ահաբեկիչներ»-էն այլ Մալէքիի տիրապետութեան տակ եղող օդուծին հարուածներէն:

Աւելի յստակացնելու համար պատկերը պէտք է նաեւ կարեւորութեամբ կարդալ Շէյխ Ալի Ալ Հաթէմի ըրած յայտարարութիւնը ուր իրաքցի աշխրաթապէտը յայտատարեց, թէ այս դէպքերը կատարողները ահաբեկիչները չեն այլ Իրաքի ազատաստեչ բնակիչները որոնք վերջին երկու տարիներուն խաղաղ միջոցներով (յատկապէս Ալ Անպարի մէջ) իրենց բողոքը արտայայտած են Մալէքիի եւ անոր վարչախումբի սխալ իշխելաոճին դէմ:

Իրաքի վարչապետը ներկայ պահու դրութեամբ յայտնուած է ծանր դրութեան մը մէջ ու ան բացայայտօրէն դարձած է կողմ ու հետաքրքրական է, թէ պիտի կարողանայ այս «Տաք շագանակներ»-ը իր ձեռքերուն մէջ պահել: Իրաքի մէջ կատարուածը Սիւննի հատուածներուն բողոքի ուժեղ ալիքն է որուն հեղինակները սկսած են դանդաղօրէն բնութագրել եղածը եւ սեղանին դնել հիմնական մէկ պահանջը որն է՝ Նուրի Ալ Մալէքիի հրաժարականը:

Բացի ասկէ պէտք է նաեւ ի

մտի ունենալ, որ Իրաքեան տագնապին արմատները կը գտնուին ԱՄՆ-ի նախկին նախագահ ձօրճ Պուշ կրտսերի կարճատես քաղաքականութեան մէջ եւ կը շարունակուին Ամերիկայի այսօրուան վարչաձեւի աններելի սխալներով ուր նախագահ Պարաք Օպամա կը փորձէ «սրբագրել» իրավիճակը ենթադրելով, որ 25 Պիլիոն տուրքի յատկացումներով ստեղծուած բանակ մը վերջ պիտի տայ Իրաքի գողգոթային:

Ասոր դիմաց երեւելի կաշառակերութեան հիմունքներով ստեղծուած բանակ, որուն զինուորներն ու սպաները ոչ մէկ հաւատք կը տածեն իրենց ղեկավարութեան հանդէպ ու այդ պատճառով ժամերու մէջ իրենց տարագները գետին նետելով «ահաբեկիչներուն» կը յանձնեն Իրաքի ամէնէն կարեւոր քաղաքները:

ԱՄՆ-ի կողքին շրջանին մէջ մեծ դեր ունի նաեւ Իրանը: Իրանի որդեգրած դիրքորոշումներուն մասին կարեւոր բացայայտում ըրած է Ալի Նուրի Չատէն (Երկրէն վտարուած Իրանցի ալլախոս փորձագէտ), որ յայտնած է, թէ նախագահ Հասան Րուհանի խորապէս հիսաթիւսուած է Մալէքիի սխալ գործունէութիւնէն եւ թէ Իրան մեծ ճիգ կը տանի գայն փոխարինող մը գտնելու համար:


Փորձագէտը նաեւ հաւաստած է, թէ Րուհանի այս մասին խօսած է, անցեալ Շաբաթ օր Իրանի ազգային անվտանգութեան նիստին ընթացքին եւ ըսած, թէ իրենք բաւական մտահոգ են Իրաքի զարգացումներուն առընթեր: Իրան նաեւ հանգիստ աչքերով չի նայիր Իրաքի Քիւրտերու դիրքերուն հզօրացման եւ կը նախընտրէ, որ անոնք ընդհանուր պետութեան մը մաս կազմեն քան թէ ստեղծեն իրենց տարածքները: Խաբկանք է նաեւ, որ Իրան բախումի պիտի երթայ «ՏԱՀԷՇ»-ին հետ յատկապէս, որ Իրանցիները Սուրիոյ մէջ երեւելի կերպով կը գործակցին «ահաբեկիչներուն» հետ:

Թրքական ճակատին վրայ տակաւին յստակ կոմնորոշում չկայ: Այս առումով թուրքիոյ այդքան ալ մտահոգ չէ Իրաքի կացութեամբ, ինչքան որ թուրք 80 -է աւելի առեւանգեալ քաղաքացիներուն ճակատագրով: Իսկ ինչ շահ կամ «պատգամ» կը կրէ թուրք հիւպատոսին եւ քաղաքացիներուն առեւազումը այդ մէկը պարզ պիտի

Շար.ք էջ 19


Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs


<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---



A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճեղաւ է

Coverage & Protection should be on the top of your priority list.



Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ՄՏԱՅՈՒԹԻՒՆ

«ԷՂՈՒԱՐԴ ԻՍԱԲԷԿԵԱՆ» ՑՈՒՑԱՍՐԱՅ ԱՅՑԵԼԵԼՈՒՑ ՅԵՏՈՅ



ՄԵԼԱՆԻԱՔԱԴԱԼԵԱՆ

Երեւանի Ժամանակակից արուեստի թանգարանի, դիմացի Հայ Արտ մշակութային կենտրոնի, դրա հարթակներից մեկում անցած տարի բացված «էղուարդ Իսաբեկեան» ցուցասրահի եռանկյունին Մաշտոցի պողոտայի սկզբնահատուածը արուեստի միջավայրի վերածելու լաւ հնարաւորութիւն կարող էր ստեղծել, քաղաքային իշխանութիւնների միտումը եթէ այդպիսին լինէր: Սակայն թերեւս որեւէ անցորդի մտքով չի էլ անցնի այս վայրում արուեստի օճախ փնտրել այսօր, ուր մնա՞ց մթնոլորտ: Ժամանակակից արուեստի թանգարանը մարդկանց հայեացքից այնպէս է թաքցուած, տեսադաշտը փակուած մայթի երկայնքով ձգուող ուղղանկյունաշար անձաշակ խանութներով, որ տեղի մթնոլորտը ամբողջովին փոխուած, արուեստի հետ կապը խզուած է, չնայած կառուցաշարի հակառակ երեսի՝ պողոտայի կողմից չեղեացող մի հատուած վերածուած է ցուցասրահի, բայց դա եղանակ չի փոխում: Մինչդեռ ոչ վաղ անցեալում թանգարանի դիմացի վարդապատ անկիւնը եթէ ինամուէր եւ ընդարձակուէր՝ համալրուելով Ժամանակակից արուեստի քանդակախմբերով, խեցեգործական արուեստի նմուշներով, գեղարուեստական-դիզայնեական աշխատանքներով, ինքնին կ'ապահովուէր մշակութային - գեղագիտական միջավայր ու մթնոլորտ: Ասուածը վերաբերում է նաեւ դիմացի Հայ Արտ մշակութային կենտրոնի շրջակայքին:

Սակայն մեր հայեացքն այսօր այլ բանի է ականատես. Հայ Արտի «էղուարդ Իսաբեկեան» ցուցասրահի դրսևակողմեան պատին կից, մասնակալի դեր կատարող ինչ-որ բանի վրայ անկողնային պարագաներ են՝ մշտական բնակչով: Արդէն քանի ամիս սրահի պատին կից այս հատուածը անտուն մէկը իր համար կացարան է դարձրել. անհաւանական տեսարան, որ նոյնիսկ քաղաքի ծայրամասերում չես հանդիպի, իսկ սա Երեւանի բուն կենտրոնն է, այն էլ՝ թանգարանային միջավայր: Ցուցասրահ մտնողի աչքից հագիւ թէ վրիպի աջակողմեան կառուցի պատի՝ «Հայ Արտ» գրութեան շարունակութեան անաւարտ թողնուած շինարարական աշխատանքների հետեւանք կապտաւուն, լաթանման պոկոտուած ծածկոցները:


Մտնենք ներս. ցուցասրահի թոյլ, արոտ լուսաւորութիւնը, վանող, տհաճ նամահոտը անբարենպաստ տպաւորութեան առաջին նշաններն են՝ տրամադրութեան վրայ ազդող: Նման լուսաւորութեամբ ցուցադրութիւնը ոչ միայն դժուարեցնում է դիտումը գոտ ֆիզիքական իմաստով, այլեւ աղքատացնում է նկարների գունային մթնոլորտը, նուազեցնում դրանց արտայայտչականութիւնը, ոչ ճիշտ լուսաւորութիւնից պատկերների երանգային անցումները չեն երեւում: Նկարների շրջանակները կարիք ունեն նորոգման կամ փոփոխման, այսինքն՝ միօրինականացման, իսկ նրանցից մէկը՝ «Ինքնադիմանկար»-ը շրջանակուած չէ: Աւելի մտահոգիչը նկարների վիճակը, պահպանութեան խնդիրն է, նրանցից մի քանիսը տեղ-տեղ ներկաթափուել, գունափոխուել են: Գրեթէ բոլոր գործերը, յատկապէս՝ «Մովինար», «Բնորդուհի», «Ինքնադիմանկար», «Մայրս եւ ես», կարիք ունեն ռեստավրացիայի (լաքապատում, կտանների ձգում եւ այլն): Ցուցասրահի խոնաւութիւնը, անկայուն ջերմաստիճանը բաւարար պայմաններ են նկարներն այս վիճակին հասցնելու համար. ձմեռուայ մի շրջան, օրինակ, ցուցասրահի ներսում ջերմաչափը ցոյց էր տալիս +3, իսկ դրսում՝ 0 աստիճան էր. տարբերութիւնը ինքնին խօսուն է՝ գրեթէ նոյնն է, թէ դրսում լինէին նկարները: Անձրեւաշրերից ու ձնհալոցքից ցուցասրահի պատերի՝ յատկապէս մի քանի հատուածները քայքայուել են, ծեփաթափուել: Առաստաղի կենտրոնական մասում վթարային վիճակ է՝ դէպի վեր տանող ներքին աստիճանների ճիշտ վերեւում բետոնապատ ցցուածքը նկատելիօրէն ճաք է տուած. իրական վտանգը՝ թէ ուր որ է մի բեկոր կարող է պոկուել եւ ընկնել ցած, մեղմ ասած, անհանգստացնող է:

Մի փոքր երկար, թէկուզ 20-30 րոպէ մնալն արդէն դժուարանում է, նամահոտը սկսում է ազդել, արդէն իսկ կառուցք պատուհաններ չունի, օդորակիչներ էլ չկան, միակ միջոցը դուռը բաց թողնելն է: Ցուցասրահի պատասխանատուն՝ Իրինա Իսաբեկեանը վարանում է. անձրեւը չի դադարում, հակառակի պէս վարարում է: Բանն այն է, որ այդպիսի անձրեւոտ մի օր փակ դուռն արանքից ջրի այնպիսի հոսք է լցուել ներս ու տարածուել ցուցասրահով մէկ, հասել մինչեւ խորզանոց, որ յատակին դրուած

նկարը ամբողջովին փնատուել, փճացել է: Մուտքի դուռն անմիջապէս կից պատին ալիւմինէ անպետքաւոր դուռը ցցուած խողովակը գարմանայի է՝ վառարանը հանելու հետ ինչո՞ւ չի վերացուել, կամ վերեւում նկարներից մէկի կողքի խողոր անցքը չի փակուել: Անգամ ամենապարզ, սակայն անհրաժեշտ մանրութիւնները, ինչպէս՝ նկարների խորագրային կամ մուտքի դուռն գրութիւնները մետաղաթիթեղէ ընդունուած ստանդարտով չեն. պատերին շարունակում են փակցուած մնալ ցուցասրահի բացման՝ Ժամանակաւորապէս արուած համակարգչային շարուածքի թղթիկները: Պատերի ներկի տարբեր երանգներ, ներքնամասերում խոնաւութեան հետքեր, բազալտէ յատակի խամրած մաշուածութիւն. ահա այսպիսի վիճակում է այսօր քաղաքի կենտրոնի մշակութային այս վայրը: Նման պայմաններում դժուար է ակնկալել, առաւել եւս ապահովել այցելուների մշտական ներկայութիւն, իսկ եթէ նկատենք, որ մշակույթի օճախները նաեւ զբօսաշրջութեան վայրեր են, կարելի է պատկերացնել, թէ ինչպիսի տպաւորութիւն կը թող-

Ժամանակուայ քաղաքապետ Երուանդ Ջախարեանի որոշմամբ Հայ Արտ մշակութային կենտրոնի այս հարթակը տրամադրուել էր «էղուարդ Իսաբեկեան» ցուցասրահի ստեղծմանը: Դա իրականութիւն դարձնելու համար պահանջուեց գրեթէ 10 տարի, այն պարագայում երբ սրահի վերանորոգման կապիտալ աշխատանքները բարեգործների աջակցութեամբ հոգացել էր նկարչի որդին՝ Գեղարուեստի ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկեանը: Եւ բացման օրը նա յայտարարեց ցուցասրահին էղուարդ Իսաբեկեանի 28 նկարների նուիրատուութեան մասին: Նկատել տանք, որ ՀՀ մշակույթի նախարարութեան «Մշակութային արժէքների փորձագիտական կենտրոնը» նկարների գեղարուեստական ընդհանուր արժէքը գնահատել է 128.000.000 դրամ գումարով, որոնցից նուազագոյնը գնահատուած է 1.250.000, առաւելագոյնը, ամենաթանկը՝ 20.850.000 դրամով:

Մեծ արուեստագետները ապրում են ոչ միայն իրենց տրուած Ժամանակի համար, այլեւ դրանից դուրս, նրանք կոչուած են հատուելու, զանց առնելու սահմաններ ու



նի այս վիճակի մի ցուցասրահ յատկապէս օտարերկրեայ այցելուների վրայ:

Ցուցասրահը թանգարանային իրերով համալրելու, այն մշակույթի լիարժէք գործող կենտրոնի (հանդիպում-դասախօսութիւններ արուեստի շուրջ, քննարկումներ, ֆիլմերի ցուցադրութիւններ, գրական եւ երաժշտական ցերեկոյթներ) վերածելու մտքեր, ծրագրեր կան իհարկէ, սակայն նման գաղափարները այդպէս էլ կը մնան առկախ, անիրագործելի, քանի անհրաժեշտ վերաբերմունքը, ուշադրութիւնը բացակայում են, չեն յատկացուած ֆինանսներ: Ցուցասրահի պայմանների, վտանգուող նկարների ներկայ վիճակի մտահոգութեամբ Իրինա Իսաբեկեանը դիմել է քաղաքապետարանի համապատասխան բաժին. միաժամանակ նա աջակից եւ բարերարներ է փնտրում: Երբ պատկան մարմինները թերանում են իրենց պարտաւորութիւններում, նման ծրագրերը կարիք են զգում աւելի մտահոգ անձանց, բարեգործական կազմակերպութիւնների աջակցութեան: Պէտք է նկատել, որ վերջիններիս գործունէութեան իրական նպատակը այսպիսի պարագաներում աւելի յստակ է դրսևորուում:

Դեռեւս 2004-ին Երեւանի այն

Ժամանակ: Նրանք իրենց գործն անում, իրենց տրուածը թողնում են աշխարհին ու գնում: Նրանց թողած հետքը, գեղարուեստական արժէքն է պայմանաւորում իրենց անուան յարատեւութիւնը, ապահովում այն գրոյցի շարունակութիւնը, որն ապագայի, գալիք սերունդների հետ է լինելու: Այդ հետքը տեսնելն ու գնահատելը կախուած է յաջորդների վերաբերմունքից ու կամքից, նրանց հոգեւոր, ճանաչողական ու բարոյական մակարդակից՝ նայած թէ այդ սանդղավանդակի ցուցիչը ի՞նչ աստիճանի վրայ է:

Այս տարի Նոյեմբերի 8-ին լրանում է էղուարդ Իսաբեկեանի՝ հայ գեղանկարչութեան պատմութեան մէջ բարձրարժէք հետք թողած նկարչի, իր երկրի ու ժողովրդի նուիրելալ հայրը, գունանկարի վարպետի ծննդեան 100 տարին: Պատշաճու՞մ կամ պատի՞ւ է արդեօք բերում մեզ ու Երեւան քաղաքին, եւ որի պատուաւոր քաղաքացին է նա, եւ իր անուան ցուցասրահի ներկայ վիճակը, նման անուշադրութիւնն ու անհոգատար վերաբերմունքը: Ափսոս են նկարները. չէ՞ որ դրանք մեր քաղաքի սեփականութիւնն են, մեր հարստութիւնը: Եւ պատասխանատուութիւնն էլ մերն է:

«ՔԱԶ ՆԱԶԱՐ»Ի «ԱՐԿԱԾՆԵՐԸ» ՐԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Բոլորն էլ գիտեն, որ քաջնազարների պակաս Հայաստանում չկա: Բայց դէ գլխաւոր Քաջ Նազարի ժամանումը Հայաստան նշանակալից էր: Բացի իր հիմնական գործից՝ Լուս ԱնՉելեսի «Քաջ Նազար» ամսաթերթը իմբազրելուց, Յովհաննէս Բալայեանը ուղիղ 15 տարի առաջ ստեղծեց Հայ-Ամերիկեան Սուրբ Ծննդեան բարեգործական հիմնադրամը՝ ի նպաստ Հայաստանի մանկատներին, ծնողագուրկ եւ հաշմանդամ երեխաների:

15 տարին անցաւ մի ակնթարթի պէս: Եւ ահա 15ամեայ հիմնադրամը մի թեթեւ ակնթար-

թեամբ, տոհմածառի քարտէզով: Դալարից յետոյ գլխաւոր Քաջ Նազարին սպասում էին խորհրդի յատուկ մանկատանը, ուր տարիներ առաջ հիմնադրամը վերանորոգել էր մանկատան եռալարկ շէնքը՝ ննջարաններ, խաղասենեակներ, սանհանգոյցներ, դասարաններ: Յատուկ մանկատան տնօրէն դոկտ. Բալասանեանը ջերմ ու անկեղծ խօսքեր ուղղեց Յ. Բալայեանին, բոլոր սփիւռքահայերին: Յաջորդ ջերմ հանդիպումը Սպիտակում էր, թիւ մէկ մասնագիտացուած դպրոցում: Հիմնադրամը այստեղ լայնածաւալ շինարարական աշխատանք-



թով ամփոփում է իր կատարած գործը: Բալայեանի այցելութիւնը գործնական էր եւ կարօտով շաղախուած: Կարեւորը, երեքամեայ հսկայածաւալ աշխատանքից յետոյ բացուեց Արարատի մարզի Դալար գիւղի մանկապարտէզը: Հիմնական վերանորոգման աշխատանքների աւարտին գիւղի երեխաները, մանկավարժները, գիւղի մեծերը բակում ուրախ տօն կազմակերպեցին, երգեցին, պարեցին, արտասանեցին, խորին շնորհակալութիւն յայտնեցին Սփիւռքի բարեկամներին՝ մեծ օգնութեան համար: Յ. Բալայեանը արժանացաւ Դալար գիւղի պատուաւոր կոչման: Շուտով մանկապարտէզի բակում աղբիւր-յուշարձան կը կառուցուի՝ գնահատելով Քալիֆորնիայի հայերի ազնիւ աշխատանքը: Մանկապարտէզի շէնքի առաջին եւ երկրորդ յարկերում փակցուած են բոլոր բարեբարների անունները, շուտով կը բացուի նաեւ երախտիքի սենեակ՝ բարբերարների լուսանկարներով, կենսագրու-

ներ է կատարել, կառուցել է մարզարան իր տարբեր խաղահրապարակներով, կառուցել նոր ննջարաններ, վերականգնել բաղնիքները, սանհանգոյցներ, լուսացքատուներ: Սպիտակում յայտնի շինարար Մկրտիչ Լամբարեանը, քաղաքապետ Գագիկ Սահակեանը ջերմ խօսքեր ուղղեցին սփիւռքահայերին, անձամբ՝ Յ. Բալայեանին: Գլխաւոր Քաջ Նազարը չհասցրեց լինել Տավուշի մարզի Պառաւաքար գիւղի մանկապարտէզում, ուր շինարարական մեծ աշխատանքներ էր կատարել Յարութ Բրուտեանի ընտանիքի օգնութեամբ, սակայն նրան տեղեակ պահեցին արած գործի բարձր որակի եւ հաճելի անակնկալների համար: Սրտաուռ էր Բալայեանի հանդիպումը «Ոգնի» երգիծականի իմբազրութիւնում, ուր չիչեցին հանգուցեալ Արամայիս Սահակեանին, իսկ նրա կինը՝ Աստղիկը պատմեց թերթի պետական աշխատանքների մասին: Յ. Բալայեանին ջերմ ու սրտաուռ ընդունեցին Հայ Ազգային կոնգրեսի համաժողովի մասնա-

ՐԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԸ ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ



ՍՈՆԱ ՊԱՏԱԼԵԱՆ

Որքան կարեւոր է այս օտար ասիերուն պահել մեր հայկական աւանդութիւններն ու սովորութիւնները հայկական դպրոցէն ներս, որպէսզի այս նորահաս սերունդը գիտնայ եւ պահէ մեր սովորութիւնները եւ նաեւ իրենք ալ իրենց կարգին փոխանցեն ապագայ սերունդին: Վերոյիշեալները նկատի ունենալով, Սահակ-Մեսրոպ Վարժարանի չորրորդ կարգի աշակերտները Համբարձման տօնին առթիւ, կոկիկ յայտագիր մը պատրաստած էին իրենց ուսուցչուհիին առաջնորդութեամբ:

Առաջին առիթով Տիկ. Պատալեան բացատրեց Համբարձման տօնին իմաստը, երբ Զատիկէն 40 օրեր ետք Յիսուս երկինք համբարձաւ եւ բազմեցաւ Հօրը աջ կողմը, ապա տեղեկացուց նաեւ թէ այդ օր աղջիկներ սարերը կը բարձրանային, ծաղիկ կը հաւաքէին եւ ապա ուրախ տրամադրութեամբ ձուածեղ եւ կաթնապուր կը պատրաստէին եւ վիճակախաղ կ'ունենային: Այդ սովորութիւններուն հետեւելով, մեր հեզաճկուն աղջիկները սրահէն ներս մուտք գործեցին իրենց անուշիկ գունազեղ եւ անուշաբոյր ծաղիկներով եւ սկսան

միասնաբար երգել «Համբարձում ետլլան» եւ «Ամպի Տակից» երգերը, միեւնոյն ժամանակ պարելով եւ հրճուելով:

Շերթն էր քաշելու վիճակը: Դուրսին մէջ գետեղեցին ջուրը, որ նախօրօք օրհնուած էր Ս. Սարգիս Եկեղեցուց մէջ, դրին ծաղիկներ եւ առարկաներ եւ բոլորը բացազանչեցին. «Հարս հան վիճակն ի բարի, համբարձում բաղձանքդ կատարի»:

Ապա Տիկ. Պատալեան կարգաց վիճակները եւ բոլորը ուրախ գուարթ եւ մեծ հետաքրքրութեամբ մտիկ ըրին իրենց վիճակուած բախտերը յուսալով, որ իրենց բաղձանքը կ'ընայ իրագործուի:

Այս փոքրիկ պատկերը թարմացուց բոլորին մտքերը, պահ մը չիչելով մեր անցեալի հաճելի սովորութիւնները, որոնք մեր մտքերուն եւ հոգիներուն մէջ կը մնան յաւետեան:

Պրն. Տնօրէնն ալ իր կարգին գնահատեց տարուած աշխատանքը, քաջալերեց աշակերտներուն ներկայացումը եւ իր գոհունակութիւնը յայտնեց, որ այսպիսով է, որ մենք կը պահպանենք մեր հաճելի եւ հին սովորութիւնները ուրախ մթնոլորտի մէջ, որոնք պատճառ կը դառնան մեր դարաւոր մշակոյթի գոյատեւման:

կիցները, ջերմ խօսքեր հնչեցին գլխաւոր Քաջ Նազարին՝ Լեւոն Տէր Պետրոսեանի, Արամ Մանուկեանի, Լեւոն Զուրաբեանի եւ այլոց կողմից: Յագեցած էր Բալայեանի մէկ

ձեռք, քննարկումներ՝ Սփիւռքի եւ սփիւռքահայերին յուզող ինդիւրների մասին: Յ. Բալայեանը ԱՄՆ վերադարձաւ հայրենիքին օգնելու, օժանդակելու նոր լիցք ստացած, որոն-



շաբաթեայ այցը Հայաստան: Հարցազրոյցներ «Արմէնպրէս» եւ «Նոյեան Տապան» լրատուական գործակալութիւններին, գործնական քննարկումներ հիմնադրամի ապագայ աշխատանքի շուրջ, հասարակական, քաղաքական գործիչների հետ կոնկրետ պայմանաւորուածութիւններ, գրոյցներ, բանավէ-

ցից գլխաւորը պիտի լինի Հայոց Մեծ Եղեռնի 100ամեայ տարելիցի չիչատակման արարողութիւնները, հիմնադրամի 15ամեայ տօնակատարութիւնը եւ նորանոր դպրոցների եւ մանկատաների վերաշինումը՝ հայրենի կարիքաւոր երեխաների ապահովութեան եւ հանգստաւայրելու համար:

ՈՒՆՏԻ ԿԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ 99-ՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ

Շարունակուած էջ 6-էն

ները որոնց համար կախողան բարձրացան Քսանները այսօր տարրական իրաւունքներ դարձած են եւ մաս կը կազմեն համամարդկային քաղաքակրթութեան: Ահա, այս է Քսաններու եւ անոնց կուսակցութեան կարեւոր իրագործումը ոչ միայն մեզի՝ հայերու, այլ ամբողջ տարածաշրջանի իրաւագրկուած, ճնշուած եւ պապենական հողերուն վրայ ստրուկ դարձած ժողովուրդներուն ազատութեան համար: Քսանները Օսմանեան պետութեան մէջ ուզեցին մտցնել յառաջդիմական գաղափարներ», ըսաւ ան: Խօսելով ներկայ զարգացումներուն մասին, Ընկ. Թիւթիւնճեան մանրամասնօրէն անդրադարձաւ Սուրբոյ մէջ տիրող կացութեան եւ

թուփիւնը կը մնայ հայկական համայնքին ներքին միասնականութեան ամրապնդումը եւ համագործակցութեան դաշտի ընդլայնումը: Լիբանանահայութեան սպառնացող որեւէ անկանխատեսելի զարգացում կամ մարտահրաւէր պէտք է միայն միասնական ուժերով դիմադրուենք», ըսաւ Ընկ. Կիրակոս Թիւթիւնճեան: Ան հաստատեց, որ լիբանանեան ներքին խնդիրները կը լուծուին համաձայնութեամբ ու երկխօսութեամբ՝ հիմնուելով պետականութեան ու ժողովրդավարութեան սկզբունքներուն վրայ: «Մեր երկրորդ սկզբունքը՝ ազատ կարծիքի եւ ազատօրէն արտայայտուելու հանդէպ մեր յարգանքն է: Լիբանան չի կրնար կրել այնպիսի վարչակարգեր, որոնք իրենց ծնունդը կ'առ-

ցաւ Հնչակեան կուսակցութեան պատմական դերակատարութեան, Քսաններու աւանդին եւ պատգամին, Թուրքիոյ ներկայ կացութեան, լայնախոհ թուրքերու հետ

կարիք ունի առերեսուելու իր սեփական անցեալին հետ: Մենք այդ թուրքերուն հետ միասին երկու կողմէն պիտի փշրենք ժխտողականութեան պատը», դիտել տուաւ



սուրիահայերու վիճակին:

Ան նշեց, որ վայրագ պատերազմը Սուրիոյ մէջ բազմաթիւ գոհեր պատճառած է եւ նիւթական հսկայական վնասներ: «Սուրիոյ բնակչութեան կողքին մարդկային եւ նիւթական մեծ վնասներ կը կրէ նաեւ մեր աւանդական եւ բարգաւաճ գաղութը, ուսմբերու եւ ականներու թիրախ կը դառնան հայաշատ թաղամասերը՝ խլելով մարդկային գոհեր, աւերելով հայկական եկեղեցիներ, դպրոցներ, ակումբներ, բնակարաններ եւ աշխատատեղիներ: Այս բոլորին վրայ հասաւ նաեւ Կիլիկիոյ վերջին պատառիկը հանդիսացող Քեսապի եւ մօտակայ գիւղերու անկումը:

նեն ուրիշներէ, կրօնականացուած են եւ չեն ապահովեր ժողովրդավարական ընտրութիւններ», հաստատեց Ընկեր Թիւթիւնճեան: Ան դիտել տուաւ, որ Քսաններու ոգեկոչման հանդիսութիւններ այս տարի տեղի պիտի ունենան դարձեալ Պոլսոյ, նաեւ Անգարայի մէջ: «Կան բազմաթիւ թուրքեր որոնք, կ'ընդունին Հայոց ցեղասպանութեան փաստը եւ Անգարայի իշխանութիւններէն կը պահանջեն ճանաչում եւ արդար փոխ հատուցում: Անոնց թիւը տարուէ տարի կը բարձրանայ», հաստատեց ընկերը: Իր խօսքին մէջ ան նաեւ խօսեցաւ Հայաստանի զարգացումներուն մասին: «Այսօրուան Հայաստանի ընդդիմադիրներու շարքին կան ոմանք, որոնք տակաւին մօտիկ անցեալին, գտնուելով իշխանութեան դիրքի վրայ կ'ընէին այն ինչ որ այսօրուայ վարչակարգը կը կատարէ: Իշխանութիւններուն վարած արտաքին քաղաքականութիւնը կը բխի Հայաստանի ռազմավարական շահերէն», ըսաւ Ընկ. Թիւթիւնճեան: Անոր համաձայն, անհրաժեշտ է Ղարաբաղի հարցով ազգային հայեցակարգ մը մշակել: «Ներքին գետնի վրայ սակայն, ժողովուրդը կը բողոքէ փտածութենէ եւ կաշառակերութենէ: Օրէնքին առջեւ չբաւորն ու հարուստը հաւասար չեն զգար, իսկ շուկային մէջ ապահովուած չեն մրցունակութեան պայմանները», եզրափակեց բանախօս ընկերը եւ հաստատեց, որ Հնչակեան կուսակցութիւնը կը մնայ անկախ Հայաստանի տէրն ու պաշտպանը:

լեզու գտնելու միջոցներուն եւ պատմական հողերուն վրայ գործունէութիւնը վերահաստատելու կարեւորութեան մասին: Հացպանեան դիտել տուաւ, որ Հնչակեան կուսակցութեան հիմնադրութիւնը՝ 1887 թուականին նորութիւն էր հայկական քաղաքական կեանքին ու պատմութեան մէջ: «Մեծ եղած է Հնչակեաններուն դերակատարութիւնը հայ ժողովուրդի կեանքին մէջ:

հասարակական գործիչը: Ան յիշեցուց, թէ ինչպէս Հասան Ճեմալ Միժեռնակաբերդի մէջ յարգած էր մէկ ու կէս միլիոն նահատակներուն յիշատակը: Հացպանեան իր խօսքին վերջին հատուածին մէջ անդրադարձաւ Թուրքիոյ մէջ Քսաններու չի շատակի ոգեկոչման հանդիսութիւններուն: «Այն ինչ որ պատահեցաւ անցեալ տարի Պոլսոյ մէջ, բնօրրան վերադարձի միայն առաջին քայլն էր եւ պէտք է գայն ողջունել:

Հնչակեանները իրենց կեանքը նուիրած են ազգին ու ժողովուրդին: Հայ ժողովուրդին փորձառութիւնը այս առումով իւրապատուկ է աշխարհին մէջ: Այն ինչ որ մենք ունեցած ենք, որեւէ այլ ժողովուրդ չունի», ըսաւ Հացպանեան: Անոր համաձայն, Չէ Կեւարան իր յեղափոխականի դաստիարակութիւնը աշակերտած պիտի ըլլար միայն Փարամազի նման գործիչի մօտ: «Փարամազ ունեցող ազգը, յիշելով Փարամազի սխրանքները, Պոլսոյ մէջ յիշատակելով Քսաններուն իշխատակը եւ թուրքին կեցցէ՛ Փարամազը ըսել տուող ազգը անմահ ազգ մըն է», հաստատեց Հացպանեան: Անոր համաձայն, կան մեծաթիւ թուրքեր, որոնք իրենց մարդկուկարիքը ունին: Մէջբերելով Յովհաննէս Թումանեանին խօսքերը Հացպանեան նշեց, որ թուրքը ձեռք կը մեկնէ հայուն, որպէսզի գայն դուրս հանէ ճահիճէն: «Թուրքը

Պէտք է վերադառնանք մեր արմատներուն: Մեր եղբայրներն են այնտեղ, մեր քոյրերը եւ մեր ազգի անդամները: Անոնք կը ներկայացնեն ժողովուրդին ձախ հատուածը: Պատմական հողերուն վրայ, Հնչակեան կուսակցութիւնը կրնայ դառնալ Նոր Հայաստանի նախա մարտիկը: 2015 թուականը պիտի դառնայ մեր վերածնունդը», եզրափակեց Հացպանեան:

Եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ ՄԴԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Յակոբ Տիրգրանեան (Ելոյթը էջ 6):

Ընկ. Տիրգրանեանի խօսքէն ետք Ուխտի հրաւերով եզրափակուեցաւ հանդիսութեան պաշտօնական բաժինը: Ապա, ազգային, յեղափոխական եւ կուսակցական երգերով հանդէս եկաւ լիբանանահայ երգիչ Պերճ Նազգաշեանը, որ մեծ խանդավառութիւն ստեղծեց համալիրին մէջ հաւաքուած հայորդիներուն մօտ:

«Նոր Հայաստանի Գաղափարները»
Օրուան հիւր բանախօսն էր Հայաստանէն յատուկ այս առթիւ ժամանած հասարակական գործիչ Սարգիս Հացպանեանը: Ան խօսե-

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

Դեսպան Թաթուլ Սարգսյանի Պատուում

Շարունակում է 1-ին

գալին բնոյթ, որ կու գար արժանաւորապէս մեծարելու հայ քաղաքագէտ մը, որու դիւանագիտական ներդրումը մեծ եղած է Ամերիկահայ իրականութենէ ներս:

Վսեմաշուք Թաթուլ Սարգսյանն՝ Ա.Մ.Ն.-ի մօտ Դեսպան նշանակուած է Մարտ 19, 2005-ին, իբրեւ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան: Ան նմանապէս Հայաստանի Հանրապետութեան դեսպան նշանակուած Մեքսիքոյի Միացեալ Նահանգներու մօտ 2012-2013: Մարգարեան, նախքան իր դեսպանական պաշտօնները ստանձնելը, ծառայած է Հայաստանի պետական այլ կառույցներու շարքին, Ներկայացուցչական Տան եւ Գործադիր Բաժանմունքներէն ներս, իբրեւ Փոխ նախագահ 1990-1991: Եղած է Արտաքին գործոց նախարարութեան քաղաքագիտութեան բաժանմունքներու Վարիչ: Միջազգային կազմակերպութիւններու մօտ նշանակուած է Դեսպան Մարտ 19, 2005-ին: Ան նմանապէս, նշանակուած է Հայաստանի Հանրապետութեան Նախագահի Յատուկ Ներկայացուցիչ՝ Ղարաբաղի 2002-2004 -ին տեղի ունեցող բանակցութիւններուն:

Մեծարանքի ճաշկերոյթ-հանդիսութեան Հանդիսավար՝ իրաւաբան ձօնէֆ Կանիմեան Բարի Գալուստի եւ օրուան ճաշկերոյթ-հանդիսութեան նախաձեռնող ազգային կառույցներուն ուղղուած շնորհակալական խօսքով բացումը կատարեց ձեռնարկին՝ Սուրէն Մխիթարեանի Ա.Մ.Ն. ի եւ Հայաստանի հանրապետութեան քայլերգերուն կատարողութենէն ետք: Ապա Մուշեղ Արք. Մարտիրոսեան կատարեց սեղաններու օրհնութիւնը:

Օրուան մեծարեալ Վսեմաշուք Դեսպանին արդիւնաւէտ իննամեայ դիւանագիտական առաքելութեան եւ այդ կապակցութեամբ արձանագրած փայլուն ձեռքբերումներուն մասին երախտաշատ ոգիով անդրադարձաւ Ճ.Բ.Լ.Մ.ի փոխ նախագահ՝ Տիար Սիւնան Սիւնանեան: Հանդիսութեան մասնակից ներկա-

ներուն եւ օրուան մեծարեալի հանդէպ համառօտ այլ դիպուկ գնահատական խօսքով ելոյթ ունեցաւ Գալիֆորնիոյ մօտ Հայաստանի Հանրապետութեան վսեմաշուք Հիւպատոս՝ Տիար Սէրկէյ Սարգիսով:

Ջերմ ծափահարութիւններու եւ յոտնկայս յարգանքի սիրալիւր միջոցառումի մէջ հանդէս եկաւ մեծարեալ դեսպանը: Ան շնորհակալութեան խօսք ուղղեց ներկայ հանդիսութիւնը կազմակերպող ազգային կառույցներուն: Առիթէն օգտուելով ան իր անխառն շնորհակալութիւնները եւ գնահատանքը յայտնեց Ամերիկայի հայ համայնքին, որ բոլորանուէր գործակցութեան ոգիով միշտ իր քաղաքական նպատու բերած է իր դեսպանութեան մշակած ազգային եւ պահանջատիրական նպատակաւոր առաքելութեան մէջ: Ան բարձր գնահատեց Ամերիկահայութիւնը Արցախի հանրապետութեան՝ Ա.Մ.Ն.-ի շատ մը նահանգներու կողմէ ճանաչման բերած մեծ աշխատանքին համար: Ան շնորհակալ լի շատակեց Պաթոն Ռուսի մէջ գործող Հնչակեան կուսակցութեան տարած հետեւողական աշխատանքները, Արցախի հանրապետութիւնը ճանչցնելու համար Լուիզիանա նահանգի կողմէ: Մարգարեան, նոյնպէս, երախտապարտ ոգիով դրուատեց Արցախի Հանրապետութեան ճանաչումը Գալիֆորնիոյ Նահանգի կողմէ: Արեւմտեան Թեմի Առաջնորդ Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի օրհնութեան խօսքով, Վսեմաշուք Դեսպան Թաթուլ Սարգսյանի մեծարանքի հանդիսութիւնը իր աւարտին հասաւ:

«Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը ջերմօրէն կ'ողջունէ Ա.Մ.Ն.-ի մօտ, Հայաստանի Հանրապետութեան վսեմաշուք Լիազօր Դեսպան՝ Թաթուլ Սարգսյանին նուիրուած մեծարանքի ճաշկերոյթ-հանդիսութիւնը, մեծապէս կը գնահատէ անոր հայրենի ազգային, քաղաքական եւ դիւանագիտական առաքելութեան բերած փայլուն ներդրումը եւ կը մաղթէ անոր նորանոր յաջողութիւններ:

Պատիւս՝ արժանաւորաց:

ԹՈՒՐԲ ԺՆՏՈՂԱԿԱՆՆԵՐԸ ՉՅԱՉՈՂԵՑԱՆ

Շարունակում է 14-ին

սի երեկոներու ինչ կ'ընենք այստեղ...»:

Միւս ելոյթներս տեղի ունեցան լեցուն դահլիճներու մէջ՝ առանց խափանման: Ըստ Աւստրալիոյ Հայ Դատի յանձնախումբի տուեալներուն՝ Միտնի մէջ Ապրիլ 24ին առաջին ելոյթիս ներկայ եղած է 1100 անձ: Յաջորդ գիշեր ես երկրորդ անգամ ելոյթ ունեցայ նոյն քաղաքին մէջ: Այնուհետեւ, Ապրիլ 27ին ելոյթով հանդէս եկայ նման ձեռնարկի մը Մելպուռնի մէջ, 500 հիւրերու ներկայութեամբ:

Ճամբորդութեանս ընթացքին միակ տհաճ երեւոյթը Աւստրալիոյ վարչապետ Թոնի Ապոթի յղած ուղերձն էր Միտնիի ոգեկոչման արարողութեան: Վերցնելով էջ մը նախագահ Օպամայի «Թատերական ներկայացումներու ժողովածուէն», Ապոթ իր հակիրճ ուղերձին մէջ, խուսափելով ցեղասպանութիւն բառէն, օգտագործեց այլ բառեր (սարսափ, ողբերգութիւն, սարսափելի իրադարձութիւններ, կորուսեալ կեանքեր): Աւստրալիոյ Հայ Դատի յանձնախումբի գործա-

դիր տնօրէն Վաչէ Ղահրամանեան վարչապետին նամակով մը յայտնեց, որ անոր ուղերձը պիտի չկարդայ հանրութեան դիմաց, որովհետեւ «ցեղասպանութիւն բառի կոպիտ բացթողումը մեծ վիրաւորանք է Աւստրալիոյ հայ համայնքին հանդէպ»:

Ղահրամանեան յիշեցուց վարչապետին նախորդ տարուան անոր ուղերձին մասին, երբ իբրեւ ընդդիմութեան առաջնորդ՝ ան պատշաճ կերպով բնութագրած էր Հայոց Յեղասպանութիւնը: Ի տարբերութիւն վարչապետին՝ Աւստրալիոյ գանձապետ, երկրի կառավարութեան ամենէն բարձրաստիճան նախարար ձօ Հոքին հանդէս եկաւ Հայոց Յեղասպանութիւնը յատկօրէն ճանչցող պաշտօնական յայտարարութեամբ:

Ես հեռացայ Աւստրալիայէն՝ խորապէս տպաւորուած 50 հազար կազմող հայ համայնքի քաղաքական բարձր աշխուժութեամբ, որ ծունկի կը բերէ քանակով զինք քանի մը անգամով գերազանցող, աւելի քան 200 հազար կազմող թրքական համայնքը:

Թարգմանեց՝ ՌՈՒՋԱՆՆԱ ԱՒԱԳԵԱՆ

«ՎԵՐԱԴԱՐՁ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ՅՈՂԵՐ»

Շարունակում է 6-ին

պարտականութիւնը պէտք է ըլլայ մշակել հայ դատի հետապնդման ընդհանուր ռազմավարութիւն ուր պէտք է, Հայաստանի եւ Սփիւռքի դերերու յստակ բաժանում կատարուի եւ հաշուի առնուին Հայաստանի պետական շահերը Սփիւռքի ակնկալութիւնները: Միանական մօտեցումը միակ գրաւական է կանխելու այն անխորժութիւնները, որոնք ծագեցան Հայաստանի-Սփիւռքի միջեւ Հայաստան-Թուրքիա Protocol-ներու ստորագրման օրերուն:

2- Ժամանակը հասունցած է, ցեղասպանութեան ճանաչումէն անդին նայելու եւ հատուցման իրաւական հիմքեր մշակելու: Առ այսօր բացի վերնազրեղէն գրեթէ ոչ մէկ աշխատանք տարուած է այդ ուղղութեամբ տրուած ըլլալով, որ իւրաքանչիւր հայ, ներառեալ այսօր հոս գտնուողներս, հատուցման վերաբերեալ իր առնաձայատուկ պատկերացումն ունի:

3. Թուրքիոյ առողջ մտաւորականութեան ու քաղաքական գործիչներու հետ կապերը պէտք է սերտացնել: Ցեղասպանութեան թեմային արծարծումը, ճանաչման եւ հատուցման մէջ քանիզմներուն մասին ամէնօրեայ գրոյցներուն մեր մասնակցութիւնը շատ աւելի դրական արդիւնք կրնայ տալ Թուրքիոյ մէջ քան հեռուոր ափերու վրայ տարուած շատ մը աշխատանքներ:

Գ. Մնալով պահանջատիրութեան ծիրէն ներս եւ նկատի ունենալով Թուրքիոյ մէջ ընթացք առած մասնակի փոփոխութիւնները հարկ կը համարենք, անգամ մը եւս շեշտը դնել Թուրքիոյ տարբեր շրջաններուն մէջ որոշակի աշխատանքներու վերականգնման եւ գործուէնութեան վերադարձին վրայ: Այդ վերադարձը պէտք է ըլլայ բաւական աշայուրջ եւ ուսումնասիրուած: Այս առումով գաղտնիք չէ արդէն, որ Ս.Դ.Հ.Կ.ն որպէս մայր կուսակցութիւն արդէն աշխատանքներ ծաւալած է եւ այդ գործերուն ամէնէն երեւելիին դարձաւ անցեալ տարի Հնչակեան Քսաններուն յիշատակի ոգեկոչման 98-ամեակի նշումը Պոլսոյ Պայագէտ հրատարակին վրայ ինչպէս նաեւ այս տարի տեղի ունեցած երկու կեդրոնական հանդիսութիւններով որոնք տեղի ունեցան Պոլսոյ Էտրինէքաբուի հայկական գերեզմանատան եւ Անգարայի մէջ: Այս ձեռ-

նարկները ոչ միայն խորհրդանշական վերադարձ կարելի է համարել, այլ խորքային պատգամ բոլորին:

Դ- Ս.Դ.Հ.Կ.ի համար հիմնական ու կարեւոր դեր ունին Միջին Արեւելեան գաղութները եւ այս ծիրին մէջ հարկ կը համարեմ անգամ մը եւս պարզել կուսակցութեան ընդհանուր կեցուածքները միջին արեւելքի մէջ տիրող յատկապէս, Սուրիոյ, իրաքի, Եգիպտոսի եւ Լիբանանի քառասյին ու ծանր իրավիճակին առընթեր: Մենք որպէս կուսակցութիւն կը հաւատանք, որ միջին արեւելքը հարուածող բոլոր տագնապները կարելի է լուծել բացառապէս քաղաքական երկխօսութեան ճանապարհով:

Ե. Հնչակեան կուսակցութեան հիմնական յենարանը անոր պայծառ երիտասարդութիւնն է: Երիտասարդութիւն որն ունի գաղափարական ամուր հիմքեր, որն ունի նուիրում ու հաւատք եւ երիտասարդութիւն որ պատրաստ է ծառայելու մեր ժողովուրդին:

Լարուածութեան, հատուածականութեան, խտրականութեան ժամանակները անցած են Սիրիայի ընկերներ: Ու այսօր Քսաններու օրուան առիթով թոյլ տուէք բարձրաձայն ըսելու, որ Պէյրութի մէջ առկայ շեշտը Հնչակեան ոգին իր արձանգանքները պիտի ունենայ ամբողջ հայաշխարհին վրայ: Պէյրութէն, Հայլէպ ու Դամասկոս, Դամասկոսէն Երեւան ու Ժընեւ եւ մինչեւ հեռուոր Ամերիկայի ափեր:

Պէյրութը ինչպէս միշտ եղած է մեր կուսակցութեան կարեւոր ամբողջներէն մին ու առաւել քան երբեք Պէյրութի Հնչակեան երիտասարդներն ու մեր աւագ եւ փորձառու ընկերները իրենց պատրաստակամութեամբ եւ նուիրումի անսակարկ ոգիով այսօր եւս կը շարունակեն ու պիտի շարունակեն քալել մեր կուսակցութեան անշեղ ուղիով: Մեր ընկերները եւ մենք բոլորս պիտի քայլենք այդ ճանապարհէն յանուն մեր ուխտին, յանուն մեր քսաններուն, որոնց աւանդը պիտի շարունակէ մնալ որպէս անվերջ պատգամ, որպէս եռանդ եւ որպէս մշտանորոգ ուխտ:

Կեցցէ՛ Հայ ժողովուրդը:
Կեցցեն անմահ Քսանները:
Կեցցէ՛ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը :
Կեցցէ՛ ազատ անկախ ամբողջական Հայաստանը:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 100,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel :----- Fax :-----

ՄԱՐԱԶԴ



ԳՈՒԽՆ ՔԻՅ ՊԱԼԻՈՉԵԱՆ
1946-2014

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ կնոջ, մօր եւ հարազատին **ԳՈՒԽՆ ՔԻՅ ՊԱԼԻՈՉԵԱՆ**ի մահը որ տեղի ունեցաւ 16 Յունիս, 2014ին չեա երկարատեւ հիւանդութեան:

Յուդարկաւորութեան եկեղեցւոյ կարգը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Յունիս 28, 2014ին առաւօտեան ժամը 9:00ին Ֆորըստ Լոնի Կարմիր եկեղեցւոյ մէջ, 6300 Forest Lawn Drive, Los Angeles CA 90068 ապա թաղման կարգը նոյն գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝
- Ամուսինը՝ Վահէ Պալիոզեան
- Դուստրը՝ Ալիսըն Պալիոզեան
- Տագրը՝ Հրաչ Պալիոզեան
- Տալը՝ Անի Սենեքերիմեան եւ զաւակը Յարութ
- Զարմուհին՝ Անահիտ Գազանճեան եւ դուստրը՝ Սիլվա եւ Նիք Շիրիլլա
- Տեպորա Պալիոզեան եւ դուստրերը Միշէլ, Թալին, Էլիզապէթ Պալիոզեան
- Լիզա Մենտոզա եւ Փէմ Մուր
- Խաչիկ եւ Յարութ Ֆաքէճեան
- եւ համայն հարազատները

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել՝ Holy Trinity Armenian Evangelical Church 1300 East Colorado Street Glendale, CA 91205
In Memory of Colleen Kay Baliozian

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ՊԱՐՈՅՐ ԳՐԱՃԵԱՆի մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի աջրիին, զաւակներուն եւ համար պարագաներուն:

ՊԱՐՈՅՐ ԳՐԱՃԵԱՆի մահուան առիթու Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան վարչութիւնը իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն:

ՊԱՐՈՅՐ ԳՐԱՃԵԱՆի մահուան առիթու Սահակեան Սանուց Միութեան վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի աջրիին՝ Արմէնուհի Գրաճեանին եւ համայն պարագաներուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի իր սրտափուռ նուիրատուութիւնը կը կատարէ «Մասիս» շաբաթաթերթին:

ՊԱՐՈՅՐ ԳՐԱՃԵԱՆի մահուան առիթու Յովհաննէս Պալայեան իր խորագրաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի աջրիին՝ Արմէնուհի Գրաճեանին եւ համայն պարագաներուն:

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՍՈՅԵԱՆի մահուան տխուր առիթով Յովհաննէս Պալայեան իր խորագրաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի աջրիին՝ Տիկ. Ժանէթ Ասոյեանին, զաւակներուն եւ համայն պարագաներուն:

ԻՆՉ ԿԸ ՊԱՏԱՅԻ ԻՐԱՔԻ ՄԷՁ

Շաբուճակուած էջ 14-էն

դառնայ յառաջիկայ օրերուն:

Նոյն թուրքիան տխուր պիտի չըլլայ եթէ իրաքը մնայ քառասուն վիճակի մը մէջ առանց մտածելու, որ նոյն այդ ահաբեկիչները կրնան անաղմուկ կերպով թրքական հողեր թափանցել:

Բոլորին համար ձեռնտու է թոյլ, անկարող, հիւանդ եւ արիւնախեղը իրաք մը:


Ու տակաւին խօսակցութիւններ կան, որ այս ընթացքը իրաքը պիտի տանի մասնատումի ստեղծելով՝ Սիւննի, Շիիթ եւ Քրտական

«Իրաքներ»:

Միջին արեւելիքի մէջ Ամերիկեան քաղաքականութեան ձախող դերակատարումներէն ետք նախագահ Օպամայի գերատեսչութեան հանդէպ ոչ մէկ վստահութիւն կայ մանաւանդ Սիւննի Արաբական տէրութեանց մօտ:

Եւ այս պատճառով է նաեւ, որ իրաքի ընդհանուր իրավիճակին կարգաւորման մէջ շատ բան կախեալ է իրանէն: Ու գաղտնիք այլ չէ, որ Շիիթ աշխարհի թիւ մէկ առաջնորդ երկիրը նոյնինքն Օպամայի գերատեսչութեան կողմէ անուղղակի ամբողջական լիազօրութիւններ

ՇՈՒԿԵԱՆԳԻՍ



ՄԱՐԻ ՏԵՐՎԻՇՕՂԼԵԱՆի (մահացած Հայէպ) մահուան քառասունքին առիթու, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի՝ Յունիս 6, 2014, Փասատինայի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Սբ. Պատարագի:

Խնդրողներն են՝
Տէր եւ Տիկին Յարութ Տէրվիշօղլեան եւ զաւակները եւ համայն հարազատներ եւ ազգականներ:
Յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

ՇՈՒԿԵԱՆԳԻՍ



ԱՐՄԻՆԷ ԳՈՒԲԵԼԵԱՆի մահուան քառասունքին առիթով յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, Կիրակի, 29 Յունիս, 2014, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, 2215 East Colorado Blvd., Pasadena, CA 91107:

Խնդրողներն են՝
Դուստրը՝ Այրի Տիկին Զաւա Աքըլեան եւ զաւակները՝ Մէնիքս եւ Փիա
Դուստրը՝ Տէր եւ Տիկին ձորճ Եւ Զորիա Ղարիպ եւ զաւակները՝ Ռիչըրտ եւ Քրիսթին
Զաւակը՝ Նազարէթ եւ Սուզան Գիւբէլեան եւ զաւակները՝ Ազատ եւ Էլիզա
Դուստրը՝ Տէր եւ Տիկին Պետրոս եւ Լենա Խոտանեան եւ զաւակները՝ Արմիկ եւ Ժանօ
Դուստրը՝ Տէր եւ Տիկին Պիլլի եւ Ազօ Ֆիշըր եւ զաւակները՝ Անի եւ Էմմա
Քոյըր՝ Տիկին Ալիս Կոքճեան:
Հոգեհանգստեան արարողութենէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Լենա Խոտանեաններու բնակարանին մէջ, 1721 Del Val Avenue, Glendale CA 91207:
Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

ունի: Նոյնն է պարագան նաեւ Սուրիոյ մէջ, ուր ԱՄՆ-ի ԱԳ նախարար ձոն Քէրի Պէյրութի մէջ «աղաչական» ոճով կը դիմէ «Հըզպալլա»ին որ դադրեցնէ պատերազմը Սուրիոյ մէջ:

ԱՄՆ Կը դատապարտէ «Հըզպալլա»ն բաց կոչ կ'ուղղէ անոր, որ դադրեցնէ պատերազմը Սուրիոյ մէջ: Կը դատապարտէ Մալէքին բաց նաեւ զաւազան ցոյց տալով կը վստահեցնէ, թէ իր օրուժը պատրաստ է այրել Սիւննի «ահաբեկիչներ»ուն ձեռքերը:

Միացեալ Նահանգներ իր ձեռքերուն մէջ կը պահէ Սիւննի եւ Շիիթ հակամարտութեան կարեւոր խաղաքարտը: Իրաքեան տեսադաշտին վրայ սակայն այդ քաղաքական ձեւաչափը կրնայ դուրս գալ Օպամայի ծանկերէն եւ պատճառ դառնալ ամբողջ տարածաքաղաքականի հրկիզման: Եւ այդ հրկիզումը կրնայ երկար տարիներ տեւել:

Յաւօք ոչ Մէլուտական Արաբիան եւ ոչ ալ իրանը տակաւին չեն կրցած հասկնալ, որ Միացեալ Նահանգներուն համար կարեւոր է որ անոնք մնան յաւիտենական թշնամիներ, լեցուն ատելութեամբ եւ արեան հեղեղներ հոսեցնեն իրաքի եւ Սուրիոյ մէջ:

Յառաջիկայ օրերը կարեւոր պիտի ըլլան իրաքի համար: Նաւթի մեծ պաշարներով հարուստ այս երկիրը կանգնած լուրջ վտանգներու առջեւ:

Արդեօք իրաք բռնած է մասնատումի ճամբան:
Սպասենք:



100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՄԱՍՈՒՆ ՈՒ ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈ

Շարունակուած էջ 8-էն

տարատեսակ հիւանդութիւններու՝ դէպի հեռաւոր անապատ տանող մահուան ճամբաներուն վրայ: Այս առնչութեամբ ականատես մը կը վկայէ. «Ականատես եղա՛յ անասելի տեսարաններու»: «**Լա Սանթինէլ**» կը մեղադրէ ոչ միայն երիտթրքական կառավարութիւնը, այլ այս ոճրագործութեան պատասխանատու կը համարէ նաեւ անոնց գինակից գերմանական եւ աւստրիական պետութիւնները: Այստեղ է որ «**Լա Սանթինէլ**» առաջին անգամ «**La terreur en Turquie-Ահաբեկչութիւնը թուրքիոյ մէջ**» խորագիրը կրող յօդուածով [49] կ'անդրադառնայ Կ. Պոլսոյ մէջ տեղի ունեցած Հնչակեան Քսան Կախաղաններու ողբերգական եղելութեան: Թերթին սոցնական դարձը ունի միաժամանակ հետեւեալ ենթատիտրագիրը. «**Vingt Arméniens pendus Constantinople - Des milliers massacres en Arménie - Քսան հայեր կախաղան հանուած են Կ. Պոլսոյ մէջ - Հազարաւորներ ջարդուած են Հայաստանի մէջ**»: Բայց այս նիւթը ներկայացնելէ առաջ, շահեկան կը նկատենք այստեղ բանալ փակագիծ մը, տալով համառօտ պատմութիւնը Հնչակեան Քսան Կախաղաններուն, պարզապէս ընթերցողին տրամադրելու համար պատմական համապատասխան ենթահող մը:

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՂԵՆՈՒԹԻՒՆԸ

7 Սեպտեմբեր 1913 թուականին Ռուսիոյ Կոստանցա քաղաքին մէջ կը գումարուի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան 7րդ պատգամաւորական ժողովը [50]: Հնչակեան զանազան կեդրոններէ հոն ժամանած պատգամաւորներու առջեւ դրուած էր դիմակայել ժամանակի ծանր մարտահրաւէրը, քաղաքական ճիշդ կողմնորոշում որդեգրել Հայաստանի ինքնավարութեան հարցով, ճշդել կուսակցութեան յետագայ գործունէութեան ծրագիրը: Այս ժողովի պատկառազու հեղինակութիւններն էին Ստեփան Սապահյուլեան, Վարազդատ Գր. Անպարճեան [51] եւ Տոթթ. Պէննէ

(Պետրոս Թորոսեան): Ժողովը կը վաւերացնէ հետեւեալ օրակարգը. ա. ՍԳՀԿԻ դիրքորոշումը թուրքիոյ մէջ: բ. Ընդհանուր եւ մասնաւոր բարենորոգումներու եւ ինքնավար Հայաստանի հարցը: գ. Միջկուսակցական յարաբերութիւնները: դ. Կուսակցական մասնաճիւղերու փոխարարբերութեան հարցը: Մեկնելով այն փաստէն, որ երիտթուրքերը կը վարէին հայտեսաց քաղաքականութիւն մը, իսկ Օսմ. Սահմանադրութեան հոչակումէն ետք հայութեան կեանքը ոչինչով բարեփոխուած էր, ընդհակառակը՝ օրէջօր աւելի զգալի կը դառնար ասեղ վտանգի մը սպառնալիքը, պատգամաւորական ժողովը կ'որոշէր որ անցնելի անօրինական գործունէութեան: Որոշում կայացնող հեղինակաւոր մարմին մը, գլխաւորութեամբ Ստեփան Սապահյուլեանի, Վարազդատի եւ Փարամազի, կ'ընդունի զազտնի որոշում մը՝ ահաբեկչութեան միջոցով սպաննել երիտթուրք ղեկավարներէն ոմանք, մասնաւորաբար եռապետութեան պարագլուխներէն՝ Էնվէրն ու Թալէաթը: Կոստանցայի ժողովի որոշումները շուտով կը սկսին գործադրուիլ: Ստեփան Սապահյուլեան իսկոյն կ'անցնի երիտթուրք բռնապետներուն դէմ մահափորձը կազմակերպելու գործին եւ, չիրաւի, ահաբեկիչները եզրապտտէն կը տեղափոխուի Կ. Պոլս, սպասելով մահափորձն իրագործելու համար պատեհ առիթին: Յաւաք սրտի, ամբողջ ծրագիրը եղբրական հետեւանքներով կը ձախողի, ներքին եւ աններքին դաւաճանութեան մը հետեւանքով: Եզրապտտի հնչակեան մասնաճիւղէն որպէս պատգամաւոր Կոստանցայի ժողովին մասնակցած Արթիւր Եասեանը [52], բուն ինքնութեամբ՝ Արշաւիր Սահակեան վատանուն հայը, թրքական ոստիկանութեան կը մատնէ Կոստանցայի ժողովին առնուած գաղտնի որոշումը՝ երիտթուրք ղեկավարները ահաբեկելու մասին:

Այս դաւաճանը, որ արդէն Հնչակեաններու մօտ կասկածելի դարձած էր ու Գահիրէի մէջ անոնց կողմէ սկսած էր հակոթութեան տակ առնուիլ, թրքական ոստիկանութեան օժանդակութեամբ կ'ազատու կը տեղափոխուի Կ. Պոլս: Թալէաթի հրամանով թուրքերը մէջ շուտով կը ծաւալի հնչակեան գրեթէ բոլոր երեւելի անձնաւորութիւններուն դէմ հալածանքի հսկայ ալիք մը: Կը ձերբակալուին հնչակեան ղեկավարներէն շուրջ 120 հոգի: Կը փակուին Հնչակեաններու «Կայծ» եւ «Կոհակ» թերթերը, նաեւ գաւառներուն մէջ թուրք ոստիկաններու կողմէ կը սպաննուին շարք մը կուսակցական գործիչներ: 16 Յուլիս 1914ին Կ. Պոլսոյ մէջ ձերբակալուած հնչակեան ղեկավարներու դատավարութիւնը ռազմական դատարանին կողմէ կը սկսի 28 Ապրիլ 1915ին [53]: Անոնց դէմ կ'առաջադրուին հետեւեալ մեղադրանքները. ա. Հնչակեան Կեդրոնի 1913 թուականի Փարիզի կոչը՝ ուղղուած Եւրոպայի ազգերուն եւ պետութիւններուն, Հայաստանի ինքնավարութեան եւ բարենորոգումներու ծրագրին վերաբերել: բ. Կոստանցայի պատգամաւորական ժողովի ընդունած «դաւադրական որոշումները»: գ. Թալէաթի դէմ մահափորձ ձեռնարկելու ծրագիրը: Ռազմական դատարանին առջեւ հնչակեան ամբաստանեալներուն դէմ դաւաճանի վկայութիւններով գործօն մասնակցութիւն կ'ունենայ Արթիւր Եասեան վատահամբաւ հայը, որ ոչ միայն թրքական ոստիկանութեանը մատնած էր Կոստանցայի որոշումներուն մեծ մասը կատարութիւններուն մեծ մասը կատարուած էին իր ցուցմունքներուն հետեւանքով: Բնականաբար, հայ ազգի այս մեծ դաւաճանը իր արդար մահապատիժը կը գտնէ 1919 թուականին Ատանայի մէջ, հնչակեան վրիժառու գործողութեամբ: Սակայն, 14 Յունիս 1915ին, ռազմական դատարանին տուած վճիռով մահուան կը դատապարտուին հնչակեան կարկառուն գործ

ծիչներէն քսաներկու հոգի: Մահուան դատապարտուած հերոսներու խումբէն երկու անձերու՝ Ստեփան Սապահյուլեանի եւ Վարազդատի նկատմամբ վճիռը կ'արձակուի հեռակայ կարգով, քանի որ անոնք արտասահման կը գտնուէին: Հնչակեան Քսան Անմահներուն մահապատիժը կը գործադրուի 15 Յունիս 1915ին Սուլթան Պայագիտ հրապարակին վրայ: Երիտթուրք ցեղասպաններուն ձեռքով կախաղան կը բարձրանան հայ յեղափոխութեան եւ ազգի ազատագրութեան կարկառուն դրօշակակիրներէն Փարամազը (Մատթէոս Սարգսեան), Դոկտ. Պէննէն (Պետրոս Թորոսեան), Յակոբ Գազազեանը, Վահան Պոյաճեանը (Ռուբէն Կարապետեան), Մինաս Քէչիշեանը (Գաբրիէլ), Սմբատ Գըլըճեանը (Անկուտի Պետրոս), Աբրահամ Մուրատեանը, Արամ Աչըզաչեանը, Գարեգին [54] Պողոսեանը, Հրանդ Եկաւեանը, Պորոս Պողոսեանը, Յակոբ Պասմաճեանը, Թովմաս Թովմասեանը, Երեմիա Մանանդեանը [55], Մկրտիչ Երէցեանը, Գեղամ Վանիկեանը (Վանիկ), Երուանդ Թօփուզեանը (Բանուոր), Յովհաննէս Եղիազարեանը (Կիւտիկ Չելլօ), Գառնիկ Պոյաճեանը եւ Արմենակ Համբարձումեանը: Հայոց ազատագրական պայքարի սրբազան խորանին վրայ իրականացած այս գերազանց գոհաբերութեան ականատես Գալուստ Քէնյ. Պողոսեան յետագային կը վկայէ, որ ազգին հերոսները «Անվէճեր կերպով կը դիմագրաւէին մահը եւ կ'արհամարհէին զայն»: Դոկտ. Պէննէ մահուան սեմին կը բացազանչէ. «Մեզ՝ քսան կը կախէք, բայց քսան հազարներ պիտի հետեւին մեզի»: Իսկ Փարամազ կախաղանին բարձունքը իրեն դարձուցած Սինայի մը կամ Թափօր լեռի մը աստուածակոխ գագաթը, մարգարէաշունչ կը յայտարարէ. «Դուք մեր մարմինը միայն կրնաք սպաննել, բայց մեր գաղափարը՝ ոչ: Վաղը ան պիտի երեւի Արեւելքի հորիզոնին վրայ: Հայութիւնը պիտի ողջունէ ինքնավար սոցիալիստական Հայաստանը» [56]: (Շարունակելի 2)

[33] Տե՛ս, Յովհաննիսեան Գ., անդ, էջ 201-202:
 [34] 1909-ի Ապրիլ 12-ի հակայեղափոխական շարժումը եւ Կ. Պոլիս ներխուժած զինեալ ամբոխը, որ մայրաքաղաքին մէջ աւերներու եւ սպանութիւններու շարժումը ալ կը գործէ, ուղղակի խուճապի կը մատնէ Երիտթուրք-բնու պարագլուխները, որոնցմէ ոմանք փախուստի դիմելով, ուրիշներ աչ ու ձախ պահուիւթելով կը փորձեն մագապուրծ փրկել իրենց կեանքը: «Ապտիւլ Համիտ Բ. Կարմիր Սուլթանը» գիրքի հեղինակ Գուրգէն Եազընեան, իր ստուար աշխատասիրութեան մէջ մեզի կը հաղորդէ հետեւեալ կարեւոր տեղեկութիւնը. «Արիւնկ-գակ Թալապ կ'ապաստանի Ակնունիի տունը, (...) ապա Զոհրապ գիմֆ կ'առաջնորդէ գերմանական դեսպանատուն: Տիկին Զոհրապի կրկնակի դիմումները Խալիլին՝ ապարդիւն պիտի մնային Զոհրապը սպանդի նամբայէն վերադարձելու, երբ դեռ Հալէպ էր»: Անդ, էջ 681:
 [35] VR, 92, 22. 04. 1909.
 [36] VR, 87, 16. 04. 1909. [37] VR, 88, 17. 04. 1909. [38] VR, 94, 24. 04. 1909.
 [39] VR, 105, 7. 05. 1909.
 [40] VR, 108, 11. 05. 1909.
 [41] Նոյնը:
 [42] Ցեղասպանագիտութիւնը վաղուց ապացուցած է, որ Ատանայի նշուած ջարդերու բոլոր պատասխանատուները երիտթուրքերն էին: Այս մասին տես նաեւ վերոնշեալ Գ. Յովհաննիսեանի «Հնչակեան Կուսակցութեան Պատմութիւն» աշխատասիրութիւնը, էջ 203-204. Գուրգէն Եազընեան նմանապէս Ատանայի ջարդին զլիստոր պատասխանատու կը նկատէ Երիտթուրք պարագլուխները, որոնք ծրագրած էին այս քսանի յարաբեր Սուլթանին վերադարձելով ապահովել անոր գահընկէցութիւնը: Տես, Եազընեան, անդ, 689-696:
 43 Triumvirat©
 44 Ismail Enver Pasa, օսմաներէն (1881-1922), կը սպաննուի Տուշանայի մօտերը՝ Տանիկիստանի մէջ, թիւրքմէներու հետ սովետական Կարմիր Բանակին դէմ մղած մարտերու ընթացքին:

45 Mehmed Talat Pasa, օսմաներէն (1874-1921), սպաննուած Պերլիմի մէջ, Սողոմոն Թեխլիբեանի վրիժառու գնդակով:
 46 Ahmet Cemal Pasa, օսմաներէն (1872-1922), կը սպաննուի Թիֆլիսի մէջ, «Նեմեսիս գործողութիւն»-ը իրականացնող Ստեփան Ծաղիկեանի, Արտաշէս Գեորգեանի եւ Պետրոս Տէր Պողոսեանի վրիժառու գնդակով:
 47 Հետեւելով իր կատարութեան թելադրանքին, Զիա Պէլ, 27 Օգոստոս 1915-ին, տուած էր համատարած կոտորածներու իրողութիւնը հերքող յայտարարութիւն մը: Տես այս մասին՝ Johannes Lepsius, Der Todesgang des Armenischen Volkes, Bericht über das Schicksal des armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges, 1919, S© 163-165©
 48 SE, 284, 6.12.1915.
 49 SE, 180, 6.10.1915.
 50 Տես, Յովհաննիսեան Գ., անդ, էջ 249-261:
 51 Անճնական նկատառումով մը Տոթթ. Եղիկ ձերբեւան կը հաւաստիացնէ, որ Վարազդատի իսկական անունը Յակոբ Թիւրպեան է: Գեղամ Յովհաննիսեան Վարազդատի որոշապէս Գրիգոր Անպարնեան անունը կը վերագրէ, տե՛ս, Յովհաննիսեան Գ., անդ, էջ 11, 133: Ա. Կիտուր նմանապէս կ'անդրադառնայ Գրիգոր Անպարնեան անունին, սակայն առանց նշելու, որ սոյնը Վարազդատի բուն ինքնութեան կը վերաբերի:
 52 Այս տխրահոչակ մարդուն մասին տես Կիտուր Ա., Պատմութիւն Ա. Գ. Հնչակեան Կուսակցութեան 1887-1962, Պէրլուք, 1962, էջ 377-379: Գեղամ Յովհաննիսեանի նշուած աշխատութեան մէջ այս դաւաճանին վատանունը նայեան արձանագրուած է, մինչդեռ Կիտուր՝ Եասեանը կ'աւանդէ: Որպէս վաւերական հեղինակ կ'մննի այս պարագային կը հետեւիմք Կիտուրի:
 53 Տես այս մասին Կիտուր Ա., անդ, էջ 380-390: Նաեւ՝ Յովհաննիսեան Գ., նոյնը:
 54 Գեղամ Յովհաննիսեանի նշուած աշխատութեան մէջ Գարեգին Առաքելի Պողոսեանին անունը Գուրգէն յիշատակուած է:
 55 Գեղամ Յովհաննիսեանի մօտ՝ Մանանեան:
 56 Հմմտ., Յովհաննիսեան Գ., անդ, էջ 260-261.